

3062

SULFU



Պըուիետաթներ բոլոր յերկրների, միացնե՛ք

3K33 սր
9-90
հ. ԱՏԱԼԻՆ

14 JUN 2005

20 NOV 2009

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

1927 թ. սեպտեմբերի 9-ին

ՊԵՏՎՐԱՏ —
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԶԵՐԵՎԱՆ • 1938

5 AUG 2013

3062

2005 MUL 4 3




3931

38

И. СТАЛИН БЕСЕДА С ПЕРВОЙ АМЕРИКАНСКОЙ РАБОЧЕЙ ДЕЛЕГАЦИЕЙ

Госиздат—Отдел парт.-полит
литературы
Ереван, 1938



ԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒ-
ԹՅԱՆ ՀԵՏ

1927 թ սեպտեմբերի 9-ին

I

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ.
ԷՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԵՐԸ

1-ին ՀԱՐՑ : Լենինը և կոմկուսակցությունը գործնականապես ի՞նչ նոր սկզբունքներ են ավելացրել մարքսիզմին : Ճի՞շտ կլիներ արդյոք ասել, թե Լենինը հավատում էր «ստեղծագործական հեղափոխությանը», մինչդեռ Մարքսն ավելի հակամետ էր սպասելու տմտեսական ուժերի գագաթնակետային գարգացմանը :

ՊԱՏԱՍԽԱՆ : Քես կարծում եմ, վոր

Լենինը վոչ մի «նոր սկզբունք» չի «ա-
վելացրել» մարքսիզմին, ինչպես վոր
Լենինը չի վերացրել մարքսիզմի «հին»
ոկդրունքներից վոչ մեկը։ Լենինը յե-
ղել ե և մնում ե Մարքսի ու Ենգելսի
ամենահամալտարիմ ու հետեւղական
աշակերաց, վորն ամրողապես ու լիո-
վին հենվում ե մարքսիզմի սկզբունք-
ների վրա։ Բայց Լենինը Մարքսի—Են-
դելսի ուսմունքի միմիայն կատարողը
չեր։ Նա դրա հետ մեկտեղ Մարքսի ու
Ենգելսի ուսմունքի շարունակողն եր։
Ի՞նչ է նշանակում այս։ Այս նշանակում
ե, վոր նա ավելի զարգացրեց Մարքսի—
Ենգելսի ուսմունքը՝ զարգացման նոր
պայմաններին համապատասխան, կապի-
տալիզմի նոր փուլին համապատասխան,
իմպերիալիզմին համապատասխան կեր-
պով։ Այս նշանակում ե, վոր դասա-
կարգային կռվի նոր պայմաններում ա-
վելի զարգացնելով Մարքսի ուսմունքը՝
Լենինը մարքսիզմի ընդհանուր դանձա-
րանը մտցրեց ինչ-վոր նոր բան՝ հա-

մեմատած այն բանի հետ, ինչ վոր
Մարքսն ու Ենգելսն եյին տվել, համե-
մատած այն բանի հետ, ինչ կարող եր
արվել մինչիմպերիալիստական կապի-
տալիզմի ժամանակաշրջանում; ընդլո-
րում այդ նորը, վոր Լենինը մտցրել ե
մարքսիզմի դանձարանը, ամբողջապես
ու լիովին խարսխած ե Մարքսի ու
Ենգելսի տված սկզբունքների վրա։
Հենց այս իմաստով ե, վոր մեզանում
խոսվում ե Լենինիզմի՝ վորպես իմպե-
րիալիզմի ու պրոլետարական հեղափո-
խությունների դարաշրջանի մարքսիզմի
մասին։ Ահա միքանի հարցեր, վորոնց
բնագավառում Լենինը նոր բան ե տվել՝
ավելի զարգացնելով Մարքսի ուսմուն-
քը։

Նախ՝ մոնոպոլիստական կապիտալիզ-
մի հարցը, իմպերիալիզմի՝ վորպես
կապիտալիզմի նոր փուլի՝ հարցը;
Մարքսն ու Ենգելսը «կապիտալում»
տվել են կապիտալիզմի հիմունքների
վերլուծությունը։ Բայց Մարքսն ու

Ենդեւսն ապրում ելին մինչմոնոպոլիս-
տական կապիտալիզմի տիրապետու-
թյան ժամանակաշրջանում, կապիտա-
լիզմի սահուն եվլուցիա կատարելու
և ամբողջ յերկրագնդի վրա նրա «խա-
ղաղ» տարածման ժամանակաշրջանում:
Այդ հին փուլն ավարտվեց XIX դարի
վերջին և XX-ի սկզբին, յերբ Մարքսն
ու Ենդեւսն արդեն կենդանի չելին:
Հասկանալի յե, վոր Մարքսն ու Ենդեւ-
սը կարող ելին լոկ կռահել կապիտա-
լիզմի զարգացման այն նոր սպայմաննե-
րի մասին, վորոնք վրա հասան կապի-
տալիզմի հին փուլին հաջորդելու յե-
կած նոր փուլի կապակցությամբ, զար-
գացման իմպերիալիստական, մոնոպո-
լիստական փուլի կապակցությամբ,
յերբ կապիտալիզմի սահուն եվլուցիա
կատարելուն փոխարինեց կապիտալիզմի
թոփչքաձև, կատաստրոֆիկ զարգացու-
մը, յերբ զարգացման անհավասարա-
չափությունն ու կապիտալիզմի հակա-
ռությունները հանդես յեկան առանձին

ուժնությամբ, յերբ վաճառահանման
չուկաների ու կապիտալի արտահանման
համար մղվող սպայքարը զարգացման
ծայրահեղ անհավասարաչափության
սպայմաններում անխուսափելի դարձրեց
իմպերիալիստական պարբերական պա-
տերագմներն աշխարհի ու ազգեցության
վլուրտների պարբերական վերաբաժա-
նումների համար: Ենինի մատուցած
ծառայությունը և, հետևապես, Ենինի
մոտ նորն այստեղ այն և, վոր նա,
հենվելով «Կապիտալի» հիմնական
դրույթների վրա, տվեց իմպերիալիզ-
մի՝ վորպես կապիտալիզմի վերջին
փուլի՝ հիմնավորված մարքսիստական
վերլուծությունը, բաց անելով նրա
խոցերն ու նրա անխուսափելի կործան-
ման սպայմանները: Այս վերլուծության
բազայի վրա ծագեց Ենինի հայտնի
դրույթն այն մասին, վոր իմպերիալիզ-
մի սպայմաններում հնարավոր և սոցիա-
լիզմի հաղթությունը առանձին, ջոկ

Վերցրած կապիտալիստական յերկրներում:

Յերկրորդ, պրոլետարիատի դիկտատուրայի հարցը: Պրոլետարիատի դիկտատուրայի՝ վորպես պրոլետարիատի քաղաքական տիրապետության և վորպես կապիտալի իշխանությունը բռնության միջոցով տապալելու մեթոդի՝ հիմնական գաղափարը տվել են Մարքսն ու Ենդելսը: Լենինի մոտ նորն այս բնագավառում այն ե, վոր ա) նա հայտնադործեց Խորհրդային իշխանությունը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև՝ զբա համար ոգտագործելով Փարիզի Կոմունայի և ոռուսական հեղափոխության փորձը. բ) պրոլետարիատի դիկտատուրայի դաշնակիցների պրոբլեմի տեսանկյունով նա բացեց պրոլետարիատի դիկտատուրայի Փորմուլայի փակագծերը, պրոլետարիատի դիկտատուրան բնորոշելով վորպես դեկալար հանդիսացող պրոլետարիատի դասակարգային դա-

շինքի հատուկ ձև վոչովունետարական դասակարգերի (գյուղացիության և այլ) շահագործվող մասսաների հետ, վորոնք զեկավարվող են հանդիսանում. դ) նա առանձին ուժով ընդդեմ այն փաստը, վոր դասակարգային հասարակության պայմաններում պրոլետարիատի դիկտատուրան դեմոկրատիայի ամենաբարձր տիպն ե, պրոլետարական դեմոկրատիայի ձևը, վորն արտահայտում և մեծամասնության (շահագործվողների) շահերը, —ի հակակչիուն կապիտալիստական դեմոկրատիայի, վորն արտահայտում ե փոքրամասնության (շահագործողների) շահերը:

Յերրորդ, սոցիալիզմի հաջող կառուցման ձեերի ու յեղանակների հարցը պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում, կապիտալիզմից դեպի սոցիալիզմ ձգվող անցողիկ ժամանակաշրջանում, մի յերկրում, վորշրջապատված ե կապիտալիստական պետություններով: Մարքսն ու Ենդելսը

գիտում ելին պրոլետարիատի զիկտա-
սուրայի ժամանակաշրջանը վորպես
ավելի կամ պակաս յերկարատե մի ժո-
մանակաշրջան, վորը լի յե հեղափոխա-
կան գոտեմարտերով ու քաղաքացիա-
կան պատերազմներով, վորի տեսու-
թյան ընթացքում պրոլետարիատը, իշ-
ճեռք և առնում տնտեսական, քաղաքա-
կան, կուլտուրական ու կազմակերպա-
կան բնույթի միջոցներ, վորոնք ան-
հրաժեշտ են հին կապիտալիստական
հասարակության փոխարեն նոր սոցիա-
լիստական հասարակություն, առանց
դասակարգերի հասարակություն, առ-
անց պետության հասարակություն
ստեղծելու համար։ Հենինն ամբողջա-
պես ու լուսվին կանգնած եր Մարքսի ու
Ենդելսի այս հիմնական դրությների։
Հողի վրա։ Հենինի մոտ այս ընազա-
վառում նորն այն և, վոր ա) նա հիմ-
նավորեց լիակատար սոցիալիստական
հասարակության կառուցման հարավու-

թությունն իմպերիալիստական պետու-
թյուններով ըրջապատված՝ պրոլետա-
րիատի զիկտասուրայի յերկրում, պայ-
մանով վոր այդ յերկերը չնեղովի՛
չըրջապատով կապիտալիստական պետու-
թյունների ուղղմական ինտերվենցիայի
կողմից. բ) նա ուրվագծեց տնտեսական
քաղաքականության կոնկրետ ուղիները
(«նոր տնտեսական քաղաքականու-
թյուն»), վորոնց ողնությամբ պրոլե-
տարիատը, իր ձեռքին ունենալով տըն-
տեսական իշխող բարձունքները (ար-
դյունաբերությունը, հողը, տրանսպոր-
տը, բանկերը և այլն)՝ սոցիալիզացիա-
յի յենթարկած ինդուստրիան զոդում և
զի յենթարկած ինդուստրիան հետ («ինդուս-
տրիայի զոդումը դյուզացիական տըն-
տեսության հետ») և այդպիսով ամ-
բողջ ժողովրդական տնտեսությունը
տանում և զեպի սոցիալիզմ. գ) նա
ուրվագծեց դյուզացիության հիմնական
մասսաներին կոռուպեցիայի միջոցով
աստիճանաբար մոտեցնելու և սոցիա-

լիստական շինարարության հունի մեջ
ներզբայլելու կոնկրետ ուղիները,
կոպերացիայի միջոցով, վորը ներկաւ-
յացնում ե զյուղացիական մանր տնտե-
սության վերակերտման ու գյուղացիու-
թյան հիմնական մասսաներին սոցիա-
լիզմի վորով վերադաստիքարակելու մե-
ծաղույն մի միջոց պրոլետարիատի
պիկտառությայի ձեռքին:

Զորբորդ, պրոլետարիատի հեղեմո-
նիայի հարցը՝ հեղափոխության, ամեն
մի ժողովրդական հեղափոխության
մէջ, ինչպես ցարիզմի դեմ ուղղված
հեղափոխության, այնպես ել կապի-
թյան մեջ: Մարքսն ու Ենդելսը տվել
են պրոլետարիատի հեղեմոնիայի դա-
դափարի հիմնական ուրվագծերը: Լե-
նինի մոտ այստեղ նորն այն ե, վոր
նա ավելի զարդացրեց ու ծավալեց այդ
ուրվագծերը՝ դրանք վերածելով պրո-
լետարիատի հեղեմոնիայի բարեկերտ
մի սիստեմի, քաղաքի ու գյուղի աշ-

14

խատավոր մասսաներին վո՛չ միայն
ցարիզմի ու կապիտալիզմի տապալման
գործում, այլև պրոլետարիատի գիե-
տատուրայի որով սոցիալիստական շե-
նարարության գործում պրոլետարիատի
կողմից ղեկավարելու բարեկերտ սիս-
տեմի: Հայտնի յե, վոր պրոլետարիա-
տի հեղեմոնիայի գաղափարը լենինի
ու նրա կուսակցության շնորհիվ վար-
պետային կիրառում գտավ Ծուսաստա-
նում: Ի միջի այլոց սրանով ե բացա-
տրվում այն փաստը, վոր հեղափոխու-
թյունը Ծուսաստանում հանգեցրեց
պրոլետարիատի իշխանությանը: Առաջ-
ներում սովորաբար բանն այնպես եր
աեղի ունենում, վոր հեղափոխության
ժամանակ բարիկադների վրա կովում
ելին բանվորները, նրանք արյուն ելին
թափում, նրանք տապալում ելին հի-
նը, իսկ իշխանությունն ընկնում եր
բուրժուատների ձեռքը, վորոնք հետո
ճնշում ու շահագործում ելին բան-
վորներին: Բանն պյապես ե յե-
վորներին:

15

Դէլ Անդրկայում ու Ֆրանսիայում, Բանն այսպես և յեղել գերմանիայում: Մեզանում, Բուսաստանում, բանն ուրիշ ընթացք ստացավ: Մեզանում բանվորները հեղափոխության հարվածային ուժը՝ ոռուական պրոլետարիատը դրա հետ մեկտեղ չանում եր լինել քաղաքի ու գյուղի բոլոր շահագործվով մասսաների հեղեմոնը, քաղաքական դեկալարը՝ նրանց իր շուրջը համախմբելով, նրանց բուրժուազիայից սրոկելով, քաղաքականապես մեկուսացնելով բուրժուազիային: Իսկ շահագործվով մասսաների հեղեմոնը լինելով՝ ոռուական պրոլետարիատն ամբողջ ժամանակ պայքարում եր հանուն այն բանի, վոր իշխանությունն իր ձեռքը զցի և այն ողտագործի իր սեփական շահերի համար՝ բուրժուազիայի դեմ, կապիտալիզմի դեմ: Իսկապես սրանով ել բացատըրվում ե այն, վոր հեղափոխության

յուրաքանչյուր հոժկու յելույթը Ռուսաստանում, ինչպես 1905 թվականի հոկտեմբերին, այնպես ել 1917 թվաշկանի վետրվարին, ասպարեզ եր մղում բանվորական պատգամավորների խորհությունները, վորպես իշխանության նոր ապարատի սաղմեր, —ապարատ, վորը կոչված ե ճնշելու բուրժուազիային, —ի հակալչիո բուրժուական պառլամենտի, վորպես իշխանության հին ապարատի, վորը կոչված ե ճնշելու պրոլետարիատին: Բուրժուազիան մեզանում յերկու մանգամ փորձել ե վերականգնել բուրժուական պառլամենտը և վերջ դնել իսորհություններին—1917 թ. ոգոստոսին, «Նախազառլամենտի» ժամանակ,՝ մինչեւ բոլշևիկների կողմից իշխանությունը վերցնելը, և 1918 թ. հունվարին, «Սահմանադիր ժողովի» ժամանակ, իշխանությունը պրոլետարիատի կողմից վերցվելուց հետո, —ու ամեն անգամ պարտություն ե կրել: Ինչո՞ւ: Վորովհետեւ բուրժուազիան արդեն քա-

զաքականապես մեկուսացված եր, աշխատալորների միլիոնավոր մասսաները պրոլետարիատին եյին համարում հեղափոխության միակ առաջնորդը, իսկ մասսաներն արդեն ստուգել ու փորձել եյին խորհուրդները, վորպես իրենց բանվորական իշխանությունը, վորին բուրժուական պառլամենտի հետ փոխել պրոլետարիատի համար ինքնառապանություն կլիներ: Ուստի զարմանալի չե, վոր բուրժուական պառլամենտի չետ փոխելը պրոլետարիատի համար ինքնառապանություն կլիներ: Ուստի զարմանալի չե, վոր բուրժուական պառլամենտարիատի մեջ մոտ չպատվաստվեց: Ահա թե ինչու հեղափոխությունը Ռուսաստանում հասցեց պրոլետարիստի իշխանությանը: Սրանք են հեղափոխության մեջ պրոլետարիատի հեղեմոնիայի լենինյան սիստեմը կենսագործելու արդյունքները:

Հինգերորդ, ազգային-զարդութային հարցը: Մարքսն ու Ենգելսը, իր ժամանակին վերլուծելով նույնությունը, Հնդկաստանում, Չինաստանում, Կենտրոնական Յեվրոպայի յերկրներում,

յեհաստանում, Հունգարիայում տեղի ունեցող անցքերը, — տվյալն ազգային-դադարութային հարցի հիմնական, մեկնակետային գտաղափարները: Լենինն իր աշխատություններում հիմնվում եր այդ գաղափարների վրա: Լենինի մոտ այս բնագավառում նորն այն ե, վոր ա) նա ի մի հավաքեց այդ գաղափարները և իմպերիալիզմի դարաշրջանի ազգային-զարդութային հեղափոխությունների վերաբերյալ հայացքների բարեկերտ սիստեմի վերածեց. բ) ազգային-դադարութային հարցը կապեց իմպերիալիզմի տապալման հարցի հետ. գ) ազգային-դադարութային հարցը միջազգային պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի բազկացուցիչ մասը հայտարարեց:

Վերջապես, պրոլետարիատի կուսակցության վերաբերյալ հարցը: Մարքսն ու Ենգելսը տվյալ են հիմնական ուրվագծեկեր կուսակցության՝ վորպես պրոլետարիատի առաջավոր ջոկատի՝ մտածին,

առանց վորի (առանց կուսակցության) պրոլետարիատը չի կարող ձևաք բերել իր աղատությունը վո'չ իշխանությունը վերցնելու իմաստով, վո'չ ել կապիտալիստական հասարակությունը վերակառուցելու իմաստով։ Լենինի մոտ այս բնագավառում նորն այն ե, վոր նա ալելի զարդարեց այդ ուրիշակծերը՝ համապատասխան պրոլետարիատի պայքարի նոր պայմաններին իմաստելիութիւն ժամանակաշրջանում, ցույց տալով, վոր ա) կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևն ե՝ համեմատած պրոլետարիատի կազմակերպության այլ ձևերի հետ (արհմիություններ, կոռպերացիա, պետական կազմակերպություն), վորոնց աշխատանքը նա կոչված ե ընդհանրացնելու և նրան ուղղություն տալու. բ) պրոլետարիատի գիտատուրան կարող ե իրականացվել միայն կուսակցության՝ վոր պես նրան ուղղություն տվող ուժի՝

20

միջոցով. դ) պրոլետարիատի դիկտուտուրան լիակատար կարող ե լինել միայն այն գեղքում, յեթե նրան զեկավարում ե մի կուսակցություն, կոմունիստների կուսակցությունը, վորը զեկավարությունը չի բաժանում և չպետք ե բաժանի այլ կուսակցությունների հետ. դ) առանց կուսակցության մեջ յերկաթե կարդապահություն ունենալու չեն կարող իրականացվել պրոլետարիատի դիկտուրայի խնդիրները շահագործողներին ճնշելու և դասակարգային հասարակությունը սոցիալիստական հասարակության վերակառուցելու վերաբերյալ։

Ահա հիմնականում այն նորը, ինչ ավել ե լենինն իր աշխատություններում՝ կոնկրետացնելով ու ավելի զարգացնելով Մարքսի ուսմունքը՝ համապատասխան պրոլետարիատի պայքարի նոր պայմաններին իմաստելիութիւն ժամանակաշրջանում։

Հենց այս պատճառով ե, վոր մեզա-

21

նում ասում են, թէ լենինիզմն իմպե-
րիալիզմի ու սրբութարական հեղափո-
խությունների դարաշընի մարք-
սիզմն ե:

Սրանից յերեսում ե, վոր լենինիզմը
չի կարելի վո'չ բաժանել մարքսիզմից,
վո'չ ել առավել ևս հակադրել մարք-
սիզմին:

Պատվիրակության աված հարցի մեջ
այնուհետեւ ասված է. «Ճի՞շտ կլիներ
արդյոք ասել, թէ լենինը հափառում
եր «ստեղծագործական հեղափոխու-
թյանը», մինչդեռ Մարքսն ավելի հա-
կամետ եր սպասելու տնտեսական ու-
ժերի գաղաթնակետային զարգացմա-
նը»: Յես կարծում եմ, վոր այսպես
ասելը միանգամայն սխալ կլիներ: Յես
կարծում եմ, վոր ամեն մի ժողովրդա-
կան հեղափոխություն, յեթե նա իս-
կապես ժողովրդական հեղափոխություն
է, ուրեմն ստեղծագործական հեղափո-
խություն ե, վորովհետեւ նա խորսա-
կում և հին կացութաձեւ և ստեղծա-

գործում, ստեղծում և նորը: Իհար-
կե, վոչ մի ստեղծագործական բան չի
կարող լինել, թող ներվի ասել, այն-
պիսի «հեղափոխություններում», վոր-
պիսիք յերեսմն լինում են, ասենք,
Ալբանիայում՝ մի շարք ցեղերի կող-
մից մյուսների գեմ հարուցվող խաղա-
լիքային «ապստամբությունների» ձե-
վով: Բայց մարքսիստներն այդպիսի
խաղալիքային «ապստամբությունները»
յերբեք հեղափոխություն չեն համա-
րել: Ակներեւ ե, վոր խոսքն այդպիսի
«ապստամբությունների» մասին չեն,
այլ ժողովրդական մասսայական հեղա-
փոխության մասին ե, վորը հարստա-
հարված դասակարգերին վոտքի յե հա-
նում հարստահարող դասակարգերի
դեմ: Իսկ այսպիսի հեղափոխությունը
չի կարող ստեղծագործական չլինել:
Մարքսն ու լենինը կողմանակից երին
հենց այսպիսի հեղափոխության, —և
միայն այսպիսի հեղափոխության:
Բնդսմին հասկանալի յե, վոր այսպիսի

Հեղափոխությունը չի կարող ծագել
ամեն սկայմաններում, վոր նա կարող
ն բորբոքվել տնտեսական ու քաղաքա-
կան կարգի վորոշ բարենպաստ պայ-
մաններում միայն:

2-րդ ՀԱՐՑ : Կարելի՞ յե արդյոք ասել,
թե կոմկուսակցությունը վերահսկում
ե կառավարությանը :

ՊԱՏԱԼՈՒՅՆ : Այսեն ինչ կախված է
այս բանից, թե ինչպես հասկանանք
վերահսկողությունը: Կապիտալիստա-
կան յերկրներում վերահսկողությունը
մի քիչ յուրօրինակ կերպով և հաս-
կացվում: Եթե գիտեմ, վոր մի ամբողջ
շարք կապիտալիստական կառավա-
րություններ վերահսկողության են
յենթարկվում խոչորագույն բանկերի
կողմից, չնայած «դեմոկրատական»
պառլամենտների գոյությանը: Պառլա-
մենտները հավատացնում են, թե հենց
իրենք են վերահսկում կառավարու-

թյուններին: Իսկ իրականում այնպես
ե լինում, վոր Փինանսական կոնսոր-
ցիումներն են կանխորոշում կառավա-
րությունների կազմն ու վերահսկո-
ղության յենթարկում նրանց գործո-
ղությունները: Ո՞ւմ հայտնի չե, վոր
վոչ մի կապիտալիստական «տերու-
թյան» մեջ չի կարող կարինես կազմը-
վել խոչորագույն Փինանսական տուղե-
րի կամքի հակառակ: բավական ե Փի-
նանսական ճնշում գործ դնել, — և մի-
նիսարները դիվահարների պես կթուչին
իրենց պոստերից: Սա իսկապես լան-
կերի վերահսկողություն ե կառավա-
րությունների նկատմամբ՝ հակառակ
պառլամենտների յերկակայական վե-
րահսկողության: Յեթե խոսքն այսպիսի
վերահսկողության մասին ե, ապա յե-
պես և հայտարարեմ, վոր զբաժա-
պարկերի վերահսկողությունը կառա-
վարության նկատմամբ մեզանում անե-
րեակայելի յե ու միանդամայն բացառ-
ված, թեկուզ հենց այն պատճառով,

վոր մեզանում բանկերը վաղուց աղ-
դայնացված են, իսկ դրամապարկերը
դուրս են չպրտված ԽՍՀՄ-ից:

Գուցե պատվիրակությունը ցանկա-
նում եր հարցնել վո՛չ թե վերահսկո-
ղության մասին, այլ կուսակցության
կողմից կառավարությանը դե-
կավարելո՞ւ մասին: Յեթե պատ-
վիրակությունը ցանկանում եր այս
մասին հարցնել, ապա յես պատաս-
խանում եմ. այո՛, կուսակցությունը
մեզ մոտ դեկավարում ե կառավարու-
թյանը: Իսկ այս դեկավարությու-
նը հաջողվում ե այն պատճառով, վոր
կուսակցությունը մեզանում վայելում
ե բանվորների ու ընդհանրապես աշ-
խատավորների մեծամասնության վըս-
տահությունը և նա իրավունք ունի
այդ մեծամասնության անունով դեկա-
վարելու կառավարության որգաննե
րին:

Ինչո՞վ ե արտահայտվում կառավա-
րության դեկավարումը ԽՍՀՄ բան-

վորական կուսակցության կողմից,
ԽՍՀՄ կոմունիստական կուսակցու-
թյան կողմից:

Նախ և առաջ՝ նրանով, վոր մեր
յերկում պետական աշխատանքի հիմ-
նական պոստերի համար կոմկուսակ-
ցությունը ջանում է խորհուրդների ու
նրանց համագումարների միջոցով անց-
կացնել իր թեկնածուներին, իր լավա-
գույն աշխատաղներին, վորոնք նվիր-
ված են պրոլետարիատի գործին և
պատրաստ են հայատով ու ճշմարտու-
թյամբ ծառայելու պրոլետարիատին:
Յեվ այս նրան հաջողվում ե հսկայա-
կան մեծամասնություն կազմող դեպ-
քերում, վորովհետեւ բանվորներն ու
դյուզացիները վստահությամբ են վե-
րաբերվում կուսակցությանը: Սա պա-
տահականություն չե, վոր իշխանու-
թյան որդաների դեկավարներ մեզա-
նում հանդիսանում են կոմունիստնե-
րը, վոր նրանք, այդ դեկավարները,

Հակայական հեղինակությունն են վայե-
լում յերկրում :

Յերկրորդ՝ նրանով, վոր կուսակցու-
թյունն ստուգում և կառավարչության
որդանների աշխատանքը, իշխանության
որդանների աշխատանքը՝ ուղղելով ան-
խուսափելի սխալներն ու թերություն-
ները, ողներով նրանց կենսազորելու
կառավարության վճիռներն ու աշխա-
տելով ապահովել նրանց համար մաս-
սաների աջակցությունը, ընդուրում
նրանք վոչ մի կարեռ վճիռ չեն ըն-
դունում առանց կուսակցության հա-
մապատասխան ցուցումների :

Յերրորդ՝ նրանով, վոր իշխանու-
թյան այս կամ այն որդանների աշխա-
տանքի պլանը մշակելիս, լինի դա ար-
դյունաբերության ու գյուղատնտեսու-
թյան գծով, թե առետրի ու կուլտու-
րական շինարարության գծով, կու-
սակցությունը առլիս և ընդհանուր
զեկավար ցուցումներ, վորոնք վորո-
շում ևն այդ որդանների աշխատանքի

բնույթին ու ուղղությունն այդ ողլան-
ների գործողության ժամանակվա հա-
մար :

Բուքժուական մամուլը սովորաբար
«զարմանք» և արտահայտում կուսակ-
ցության կողմից պետության գործե-
րին այսպես «միջամտելու» առթիվ:
Բայց այդ «զարմանքն» ամբողջովին
կեղծ է : Հայտնի յե, վոր բուքժուա-
կան կուսակցությունները կապիտալիս-
տական յերկրներում ճիշտ չ նույնպես
«միջամտում ևն» պետության գործե-
րին ու զեկավարում կառավարություն-
ներին, ընդուրում զեկավարությունն
այնտեղ կենտրոնանում և խոչը բան-
կերի հետ այս կամ այն կերպ կապ-
ված և իրենց զերը, այդ պատճառով,
ընակչությունից թագցնել ջանացող
անձերի մի նեղ շրջանի ձեռքում : Ո՞ւմ
հայտնի չե, վոր յուրաքանչյուր բուք-
ժուական կուսակցություն Անդլիայում
կամ ուրիշ կապիտալիստական յերկը-
ներում ունի իր դադանի կարինետը՝

րազկացած անձերի մի նեղ չըջանից,
վորոնք իրենց ձեռքում են կենտրոնաց-
նում զեկալարությունը։ Վերհիշեցեք
թեկուզ լլոյդ Զորջի հայտնի ճառը
լիրերալ կուսակցության «սալերային»
կարինետի մասին։ Այս տեսակետից
տարբերությունը խորհուրդների յերկ-
րի ու կապիտալիստական յերկրների
միջև այն ե, վոր ա) կապիտալիզմի
յերկրներում բուրժուական կուսակցու-
թյունները պետությունը զեկալարում
են բուրժուազիայի շահերի համար ու
պրոլետարիատի դեմ, մինչեռ ԽՍՀՄ
մեջ կուսակցությունը պետությանը
զեկալարում ե պլութոարիատի շահե-
րի համար ու բուրժուազիայի դեմ.
բ) բուրժուական կուսակցությունները
թագցնում են ժողովրդից իրենց զեկա-
լար դերը՝ դիմելով կասկածելի գաղտո-
նի կարինետների ողնությանը, մինչ-
դեռ կոմկուսակցությունը ԽՍՀՄ մեջ
կարոտ չե վոչ մի գաղտնի կարինետի,
նա նշավակում ե գաղտնի կարինետնե-

րի քաղաքականությունն ու ոլորտիսի-
կան և բացորոշ հայտարարում ե ամ-
բողջ յերկրի առաջ, վոր ինքն իր վրա
յե վերցնում պետության զեկալարման
պատասխանատվությունը։

Պատվիրակներից մեկը։ Նույն այդ
հիմունքներով՝ կուսակցությունը
զեկալարում արհմիություններին։

Ստալին։ Հիմնականում—այս՛։ Զետ-
կանորեն կուսակցությունն արհմիու-
թյուններին վոչ մի դիրեկտիվ չի կա-
րող տալ։ Բայց կուսակցությունը դի-
րեկտիվներ ե տալիս արհմիություննե-
րում աշխատող կոմունիստներին։
Հայտնի յե, վոր արհմիություններում
կան կոմունիստների Փրակցիաներ,
ճիշտ այնպես, ինչպես նաև խորհուրդ-
ներում, կոոպերացիայում և այլն։ Այդ
կոմունիստական Փրակցիաների պար-
տականությունն այն ե, վոր համոզե-
լու միջոցով արհմիությունների, խոր-
հուրդների, կոոպերացիայի և այլ որ-
դաններում ընդունել տան այնպիսի

զէիոներ, վորոնք համապատասխանում
են կուսակցության դիրեկտիվներին:
Յեվ այս նրանց հաջողվում ե իրակա-
նացնել հսկայական մեծամասնություն
կազմող գեղքերում, վորովհետև կու-
սակցության ազգեցությունը մասսանե-
րի մեջ հսկայական է, և նա այնտեղ մեծ
վստահություն ե վայելում: Այս ճա-
նապարհով ենք համում պլուտարիա-
տի ամենաբարձրագան կազմակերպու-
թյունների գործողությունների միաս-
նականությանը: Առանց դրան մենք
տարբնթացություն ու տարազարկ կու-
նենայինք բանվոր դասակարգի այս
կտագմակերպությունների աշխատան-
քում:

Յ-րդ ՀԱՐՑ: Վորչափով վոր Ռուսաս-
տանում լիզալ ե միայն մի կուսակցու-
թյուն, դուք վո՞րտեղից զիտեք, վոր
մասսաները համակրում են կոմու-
նիզմին:

ՊՈ.ՏԱ.ՍԻՆԱՆ: Այդ ձիւտ ե, վոր
ԽՍՀՄ մեջ չկան բուրժուական լեզար
կուսակցություններ, վոր այնտեղ լե-
զալությունից ոգտվում ե միայն մի
կուսակցություն՝ բանվորների կուսակ-
ցությունը, կոմունիստների կուսակցու-
թյունը: Սակայն մենք ունենք արդյոք
ճանապարհներ ու միջոցներ՝ համոզվե-
լու այն բանին, վոր բանվորների մե-
ծամասնությունը, աշխատավորական
մասսաների մեծամասնությունը համա-
կրում ե կոմունիստներին: Խոսքը վե-
րաբերում է, իհարկե, բանվորական ու
գյուղացիական մասսաներին, այլ վոչ
թե նոր բուրժուազիային, այլ վոչ թե
հին շահագործող դասակարգերի բեկոր-
ներին, վորոնց պրոլետարիատն արդեն
ջախջախել է: Այո՛, մենք հնարավորու-
թյուն ունենք, մենք ունենք ճանա-
պարհներ ու միջոցներ՝ իմանալու, թե
բանվորական ու գյուղացիական մասսա-
ները համակրում են արդյոք, թե չեն
համակրում կոմունիստներին: Վեցնենք

մէր յերկրի կյանքի կաթոքապույն մո-
մէնաները և տեսնենք, արդյոք Հիմք
կա՞ պնդելու, վոր մասսաներն իսկա-
ռուս համակրում են կոմունիստներին :

Վեցնենք, ամենից առաջ, այնպիսի
կարեռը մոմենտ, ինչպես Հոկտեմբե-
րյան հեղաշրջման ժամանակաշրջանն ե
1917 թվականին, յերբ կոմունիստների
կուսակցությունը, հենց վորովես կու-
սակցություն, բացորոշ կոչ եր անուժ
բանվորներին ու դյուզացիներին՝ տո-
պալելու բուրժուազիայի իշխանությու-
նը, և յերբ նա, այդ կուսակցությունը,
սահյավ բանվորների, զինվորների ու
դյուզացիների հակայական մեծամաս-
նության աջակցությունը։ Ի՞նչպես եր
այն ժամանակ իրադրությունը։ Իշխա-
նության գլուխ կանգնած եյին սոցիա-
լիստ-հեղափոխականները (ես-երներն)
ու սոցիալ-դեմոկրատները (մենչե-
լիկները), վորոնք ըլոկ եյին կազմել
բուրժուազիայի հետ։ Իշխանության ա-
պարտը կենտրոնում ու անդերում,

ձիւտ այնպես, ինչու նույն տառներիու-
միլիոնանոց բանակի հրամանաւարու-
թյան ազարատը, դանլում եր այդ կու-
սակցությունների ձեռքում, կառավա-
րության ձեռքում։ Կոմունիստնե-
րի կուսակցությունը դանվում եր կի-
սալեզար վիճակում։ Բոլոր յերկրների
բուրժուաները զուշակում եյին բոլ-
չիկների կուսակցության անխուսափելի
տապալումը։ Աշաւանան ամբողջապես
ու լիովին կերենկու կառավարության
կողմն եր կանգնած։ Բայց և այնպես
կոմունիստների կուսակցությունը, բոլ-
չիկների կուսակցությունը չեր զարա-
րում պրոլետարիատին կոչ անելուց՝
տապալելու այդ կառավարությունը և
հաստատելու պրոլետարիատի դիկտա-
տուրա։ Յել ի՞նչ։ Աշխատավոր մա-
սնաների հակայական մեծամասնությունը
թիւունքում։ ու ճակատում ամենավճռու-
կան կերպով աջակցեց բոլչեկիների կու-
սակցությանը, —և կերենսկու կառավա-
րությունը տաղարվեց, պրոլետարիատի

իշխանությունը հաստատվեց : Ի՞նչորեւ
 կարող եր պատահել, վոր բոլշևիկներն
 այն ժամանակ հաղթող դուրս յեկան՝
 չնայած բոլոր յերկրների բուրժուաների
 թշնամական դուշակություններին՝
 բոլշևիկների կուսակցության կործան-
 ման մասին : Արդյոք այս հանդամանքը
 չի ասլացուցում, վոր աշխատավորների
 լայն մասսաները համակրում են բոլ-
 շևիկների կուսակցությանը : Յես կար-
 ծում եմ, վոր ապացուցում ե : Ահա ձեզ
 բնակչության լայն մասսաներում կո-
 մունիստների կուսակցության ունեցած
 հեղինակավորության ու աղղեցության
 առաջին ստուգումը :

Վերցնենք հետեւյալ ժամանակաշրջա-
 նը, ինտերվենցիայի ժամանակաշրջանը,
 քաղաքացիական պատերազմի ժամանա-
 կաշրջանը, յերբ անդիմական կապիտա-
 լիստներն ոկուպացիայի եյին յենթար-
 կել Ռուսաստանի Հյուսիսը, Արխանգել-
 սիի ու Մուրմանի շրջանը, յերբ ամե-
 րիկյան, անդիմական, ճապոնական ու

Պրանսական կապիտալիստներն ոկուպա-
 ցիայի եյին յենթարկել Սիբիրը՝ առաջ
 քաշելով Կուչակին, յերբ Փրանսական
 ու անդիմական կապիտալիստները «Բու-
 սաստանի Հարավի» ոկուպացիայի քայ-
 լեր ձեռնարկեցին, վահանի վրա բարձ-
 րացնելով Դենիկինին ու Վրանդելին :
 Դա Անտանտի ու Ռուսաստանի հակա-
 նեղափոխական գեներալների պատե-
 րազմն եր Մոսկվայի կոմունիստական
 կառավարության դեմ, մեր հեղափո-
 խության հոկտեմբերյան նվաճումների
 դեմ : Դա բանվորների ու գյուղացիների
 լայն մասսաներում կոմունիստների
 կուսակցության ունեցած ուժն ու կա-
 յունությունը մեծագույն ստուգման
 յենթարկելու ժամանակաշրջանն եր :
 Յեզ ի՞նչ : Միթե հայտնի չե՞ , վոր քա-
 ղաքացիական պատերազմի արդյունքն
 այն յեղալ, վոր ոկուպանտները դուրս
 չարտելցին Պուտաստանից, իսկ հակա-
 նեղափոխական գեներալներին կարմիր
 բանակը կոտորեց : Ահա հենց այստեղ

պարզվեց, վոր պատերազմի բախտը, վերջին հաշվով, վճռում և փո'չ թե տեխնիկան, վոր առասորդեն մտակարաբում եյին կոչչակին ու Դենիկինին ԿՍՀՄ թշնամիները, այլ ճիշտ քաղաքականությունը, բնակչության միլիոնավոր մասսաների համակրանքն ու աջակցությունը։ Պատահական բան է արդյոք, վոր բոլքեիկների կուսակցությունն այն ժամանակ հաղթող զուրոյեկալ։ Իհարկե, պատահական բան չե։ Այս հանգամանքը չի՞ խօսում արդյոք այն մտաին, վոր կոմունիստների կուսակցությունը մեկ մոռ վայելում և աշխատալորների լայն մասսաների համակրանքը։ Յես կարծում եմ, վոր խոսում եւ։ Ահա ձեզ ԿՍՀՄ մեջ կոմունիստական կուսակցություն ունեցած ուժի ու կայունության յերկրորդ ստուգումը։ Անցնենք ներկա ժամանակաշրջանին, չետպատերազմյան ժամանակաշրջանին, յերբ չերթի զրվեցին խաղաղ շենաբարության հարցերը, յերբ ուղե-

տեսական ավերմունքի չըջանին փոխարինեց ինդուստրիալի վերականգնման շրջանը, վերջապես՝ մեր ամրողջ ժողովրդական տնտեսությունը տեխնիկական նոր բաղայի վրա վերակառուցելու շրջանը։ Արդյոք այժմ ճանապարհներ ու միջացներ ունենք մենք, վրապեսզի ստուգենք կոմունիստների կուսակցության ուժն ու կայունությունը, վրապեսզի վրոշենք աշխատավորների բայն մասսաների կողմից գեպի այս կուսակցությունը տածվող համակրանքի աստիճանը։ Յես կարծում եմ, վոր ունենք

Վերցնենք ամենից առաջ արհմիությունները, վորոնք միավորում են մոտ 10 միլիոն պլուտարներ, տեսնենք մեր արհմիությունների ղեկավար սրգանների կազմը։ Պատահական և արդյոք վոր այս սրգանների գլուխ կոմունիստներն են կանգնած։ Իհարկե, պատահական չե։ Հիմար բան կլիներ կարծեւ, թե ԿՍՀՄ բանվորներն անտարբեր են

վերաբերվում դեպի արհմիությունների
զեկավար որդանների կաղմը: ԽՍՀՄ
բանվորներն աճել ու դաստիարակվել են
յերեք հեղափոխությունների փոթորկի
մեջ: Վոչ վոք այնպես չի սովորել, ինչ-
պես նրանք՝ ստուգել իրենց զեկավարնե-
րին և նրանց դուրս չպրտել, յեթե նրանք
սղողետարիատի շահերին չեն բավարա-
րում: Մեր կուսակցության մեջ մի ժա-
մանակ ամենաժողովրդական մարդը
Պլեխանովն եր: Սակայն բանվորները
կանդ չառան այն բանի առաջ, վորպես-
կի վճռաբար մեկուսացնեն նրան, յերբ
նրանք համոզվեցին, վոր Պլեխանովը
հեռացել ե սղողետարական դժիգ: Յել
յեթե այդպիսի բանվորներն արտահայ-
տում են իրենց լիակատար վստահու-
թյունը կոմունիստներին՝ նրանց առաջ
քաշելով արհմիություններում պատաս-
խանատու պլոստերի համար, ասկա այդ
չի կարող ուղղակի մատնանշումն չծա-
ռայել այն բանի, վոր կոմունիստական
կուսակցության ուժն ու կայունություն-

նը ԽՍՀՄ բանվորների չըջանում—հըս-
կայական են: Այս ձեղ ստուգումն այն
բանի, վոր բանվորների լայն մասսա-
ներն անպայման համակրում են կոմու-
նիստների կուսակցությանը:

Վերցնենք խորհուրդների վերջին
ընտրությունները: Մեղանում խոր-
հուրդների ընտրության իրավունք վա-
յելում և ԽՍՀՄ ամբողջ չափահաս
բնակչությունը՝ սկսած 18 տարեկան
հասակից, առանց սեռի ու ազգության
խորության, մինուս բուրժուական
տարրերը, վորոնք չահազործում են
ուրիշի աշխատանքը և զրկված են ընտ-
րական իրավունքներից: Այդ կազմում
և մոտ 60 միլիոն ընտրող: Դրանց
հակայական մեծամասնությունը, իհար-
կե, դյուզացիներն են: Այդ 60 միլիո-
նից ընտրական իրավունքներն իրակա-
նացը մոտ 51 տոկ., այսինքն՝ 30 մի-
լիոնից ավելին: Զիմա աչքի անցկաց-
րեք մեր խորհուրդների զեկավար որ-
դանների կազմը կենտրոնում ու տեղե-

բում : Կարելի՞ յե արդյոք պատահա-
կանություն անվանել այն փաստը, վոր
ընտրովի զեկավար տարրերի հոկայա-
կան մեծամասնությունը կոմունիստներն
են կազմում : Պարզ ե, վոր այս չի կա-
րելի պատահականություն անվանել :
Արդյոք այս փաստը չի՞ խոսում այն
մասին, վոր կոմունիստական կուսակ-
ցությունը վստահություն ե վայելում
գյուղացիության միլիոնավոր մասսա-
ների ըջանում : Յես կարծում եմ, վոր
խոսում ե : Ահա ձեզ կոմունիստական
կուսակցություն ուժի ու կայունության
դարձյալ մի ստուգում :

Վերցնենք կոմյերիտմիությունը (յե-
րիտասարդության կոմունիստական մի-
ությունը), վորը միավորում ե մոտ 2
միլիոն բանվորական ու գյուղացիական
յերիտասարդություն : Կարելի՞ յե ար-
դյոք պատահականություն անվանել այն
փաստը, վոր կոմյերիտմիության ընտ-
րովի զեկավար տարրերի հոկայական
մեծամասնությունը կազմում են կոմու-

նիստները : Յես կարծում եմ, վոր այս
չի կարելի պատահականություն անվա-
նել : Ահա ձեզ կոմունիստական կուսակ-
ցության ուժի ու հեղինակավորության
դարձյալ մի ստուգում :

Վերցնենք, վերջապես, մեր անթիվ
կոնֆերենցիաները, խորհրդակցություն-
ները, պատովիրակային ժողովները և
այլն, վորոնք ընդդրկում են ԽՍՀՄ
կազմի մեջ մտնող բոլոր ու ամեն տե-
սակի ազգությունների աշխատավոր
տղամարդկանց ու կանանց, բանվորների
ու բանվորուհիների, գյուղացիների ու
գեղջկուհիների միլիոնավոր մասսաներ :
Եյս խորհրդակցությունների ու կոնֆե-
րենցիաների մասին Արևմուտքում յեր-
րեմն հեղնում են՝ պնդելով, թե ոռու-
ներն առհասարակ սիրում են խոսել :
Եյնինչ մեզ համար այդ խորհրդակցու-
թյուններն ու կոնֆերենցիաներն ունեն
հոկայական նշանակություն ինչպես
մասսաների տրամադրությունն ստուգե-
լու իմաստով, այնպես ել մեր սխալ-

ներն ի հայո բերելու և այդ սխալները
վերացնելու միջոցներ ուրավագելու ի-
մաստով, վորովհետեւ մեզանում քիչ
չեն սխալները, և մենք դրանք չենք
թաղցնում՝ յենթադրելով, վոր սխալ-
ներն ի հայո բերելն ու նրանք աղնվո-
րեն ուղղելը յերկրի զեկավարումը բա-
րելավելու լավագույն միջոցն է: Աչքի
անցկացրեք այդ կոնֆերենցիաների ու
խորհրդակցությունների հռետորների
ճառերը, աչքի անցկացրեք բանվորնե-
րից ու գյուղացիներից յելած այդ «հա-
սարակ մարդկանց» գործարարական ու
անխորսմանկ զիտողությունները, աչքի
անցկացրեք նրանց վճիռները,—և դուք
իտեսնեք, թե վորչափ հսկայական են
կոմունիստական կուսակցության ազգե-
ցությունն ու հեղինակավորությունը,
դուք կտեսնեք, վոր այդ ազգեցությանն
ու այդ հեղինակավորությանը կարող
եք նախանձն աշխարհիս ամեն մի կու-
սակցություն: Ահա ձեզ կոմունիստա-

կան կուսակցության իւրյունության
դարձյալ մի ստուգում:
Սրանք են այն ճանապարհներն ու մի-
ջոցները, վորոնք հնարավորություն են
տալիս ստուգելու կոմունիստական կու-
սակցության ուժն ու ազգեցությունը
ժողովրդական մասսաների մեջ:

Ահա թե ինձ վորտեղից ե հայտնի,
վոր ԽՍՀՄ բանվորների ու դյուզացի-
ների լայն մասսաները համակրում են
կոմունիստական կուսակցությանը:

4-րդ ՀԱՐՑ: Յերե անկուսակցիական
մի խումբ ֆրակցիա կազմակերպեր և
ընտրություններում առաջադրեր իր
թեկնածուներին, վորոնք կանգնած են
խորհրդային կառավարությանն աջակ-
ցելու պլատֆորմի վրա, բայց դրա
հետ մեկտեղ արտաքին սուհատրի մօնո-
պոլիայի վերացում պահանջեր, —ար-
դյունք նրանք կկարողանայի՞ն իրենց մի-
ջոցներն ունենալ ու ակտիվ ժաղաքա-
կան կամպանիա մղել:

ՊԱՏԱՍԽԱՆՈՒՅԻՆ : Յես կարծում եմ, վոր
այս հարցում անհաջողելի հակասու-
թյուն կա : Անկարելի յէ պատկերաց-
նել վորեւ մի խումբ, վորը կանգնած
լինի խորհրդային կառավարությանն ա-
ջակցելու պլատֆորմի վրա և դրա հետ
մեկտեղ պահանջի վերացնել արտաքին
առևտրի մոնոպոլիան : Ինչո՞ւ : Այն
պատճառով, վոր արտաքին առևտրի
մոնոպոլիան խորհրդային կառավա-
րության «պլատֆորմի» անհող-
դողդ հիմքերից մեկն ե : Այն պատճա-
ռով, վոր արտաքին առևտրի մոնոպո-
լիայի վերացում պահանջող խումբը չի
կարող խորհրդային կառավարությանն
աջակցելու կողմնակից լինել : Այն պատ-
ճառով, վոր այդպիսի խումբը կարող
է լինել միայն մի խումբ, վորը խորա-
պես թշնամի յէ ամրող խորհրդային
հասարակակարգին :

ԽՍՀՄ մեջ կան, իհարկե, տարրեր,
վորոնք արտաքին առևտրի մոնոպոլիա-
յի վերացումն են պահանջում : Այդ՝

նեպմաններն են, կուլտակները, արդեհո-
ջախջախված շահագործող դասակարգե-
րի բնկորները և այլն : Բայց այս տար-
բերը բնակչության չնչին փոքրամաս-
նությունն են կազմում : Յես կարծում
եմ, վոր պատկիրակությունն իր տված
հարցում այս տարրերի մասին չե, վոր
խոսում ե : Իսկ յեթե խոսքը վերաբերում
է բանվորներին ու գյուղացիների աշ-
խատավորական մասսաներին, ապա յես
ոկետք և ասեմ, վոր արտաքին առևտրի
մոնոպոլիայի վերացման պահանջը
նրանց շրջանում կարող եր լոկ քրքիջ
ու թշնամական վերաբերմունք առա-
ջացնել :

Իրոք բանվորների համար ի՞նչ կա-
րող եր նշանակել արտաքին առևտրի
մոնոպոլիայի վունչացումը : Այս նրանց
համար կնշանակեր հրաժարումն յեր-
կիբն ինդուստրացնելուց, նոր դորձա-
րաններ ու Փարբիկաներ կառուցելուց,
հին գործարաններն ու Փարբիկաներն
ընդլայնելուց : Այս նրանց համար կնշա-

նակեր ԽՄՀՄ հեղեղել կապիտալիստա-
կան յերկրներից յեկող ապրունքներով,
կծկել մեր ինդուստրիան նրա համե-
մատական թուլության շնորհիվ, բազ-
մավատկել գործադուրկների թիվը,
վատթարացնել բանվոր դասակարգի
նյութական դրությունը, թուլացնել
նրա տնտեսական ու քաղաքական զիր-
քերը: Վերջին հաշվով այս կնշանակեր
ուժեղացնել նեղմանին ու առհասարակ
նոր բուրժուազիյին: ԽՄՀՄ պրոլետա-
րիատը կարող է արդյոք այս ինքնա-
սպանությանը դիմել: Պարզ է, վոր չե-
լիարող:

Իսկ գյուղացիության աշխատավոր
մասսաների համար ի՞նչ կնշանակեր
արտաքին առևտրի մոնոպոլիայի վոչըն-
չացումը: Այդ կնշանակեր մեր յերկիրն
ինքնուրույն յերկրից մի կիսագաղու-
թյալին յերկրի վերածել ու գյուղացիա-
կան մասսաներին աղքատացնել: Այդ
կնշանակեր դարձ գեղի այն «աղատ
առևտրի» ոճիմը, վորը թագավորում

էր կուչակի ու դենիկինի որով, յերր
հակահեղափոխական գեներալների ու
«դաշնակիցների» միացյալ ուժերի հա-
մար հեշտ եր բազմամիլիոն գյուղա-
ցիությանը թալանելն ու կողովտելը:
Վերջին հաշվով այդ կնշանակեր կու-
լակների ու այլ շահագործող տարրերի
ուժեղացում գյուղում: Գյուղացիները
բավականաչափ ճաշակել են այդ ոճի-
մի սքանչելիքներն Ռուսակինայում ու
չովկասային կովկասում, Վոլգայի ա-
շխուիսային կովկասում, ի՞նչ հիմքեր կան
յենթագրելու, վոր նրանք կցանկանան
նորից այդ ողն իրենց վիզը գցել:
Եթե պարզ չե, վոր գյուղացիության
աշխատավոր մասսաները չեն կարող
արտաքին առևտրի մոնոպոլիայի վոչըն-
չացման կողմանակից լինել:

Պատվիրակներից մեկը: Պատվիրակու-
թյունն առաջարկեց արտաքին առևտրի
մոնոպոլիայի վերաբերյալ, նրա վե-
րացման վերաբերյալ կետը վորպես մի
կետ, վորի շուրջը կարող կլիներ կադ-

մակնըպղել բնակչության մի ամրող ջ
խումբ, յեթէ ԽՍՀՄ մեջ մի կուսակցության մոնոպոլիա, լեզալության մոնոպոլիա չլիներ:

Ստալին: Այսպիսով պատվիրակությունը վերադառնում ե կոմունիստական կուսակցության՝ վորպես ԽՍՀՄ մեջ միակ լեզալ կուսակցության՝ մոնոպոլիայի հարցին: Այս հարցի կարճ պատասխանը յես արդեն տվի, յերբ խոսում եյի բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների դեպի կոմունիստական կուսակցությունը տածած համակրանքն ստուդելու ճանապարհների ու յեղանակների մասին: Ինչ վերաբերում ե բնակչության մյուս խավերին, —կուլակներին, նեպմաններին, ջախջախված հին շահագործող դասակարգերի մնացորդներին, —ապա նրանք մեզանում զրկված են իրենց քաղաքական կազմակերպությունն ունենալու իրավունքից՝ ճիշտ այնպես, ինչպես վոր նրանք զրկված

են ընտրական իրավունքներից: Պրոլետարիատը բուրժուազիայից ֆարբիկաներն ու գործարանները, բանկերն ու յերկաթուղիները, հողն ու հանքահորերը չեն միայն, վոր խլել ե: Նա բուրժուազիայից խլել ե նաև իր քաղաքական կազմակերպությունն ունենալու իրավունքը, վորովհետեւ պըռլետարիատը բուրժուազիայի իշխանության վերականգնումը չի ցանկանում: Պատվիրակությունն, ըստ յերկութին, առարկություններ չունի այն բանի դեմ, վոր ԽՍՀՄ պըռլետարիատը բուրժուազիայից ու կալվածատերներից խլել ե Փարբիկաներն ու գործարանները, հողն ու յերկաթուղիները, բանկերն ու հանքահորերը: (Ծիծաղ): Բայց պատվիրակությունը, ինչպես ինձ թվում ե, փոքր էնչ տարակուսում ե այն առթիվ, վոր պըռլետարիատը դրանով չըսպազմանացավ ու ալելի սուսաջ դնաց՝ բուրժուազիայից խլելով քաղաքական իրավունքները: Սա, ըստիս, այնքան ել տրա-

մարտնուկոն չե կամ, ավելի ճիշտը,
բոլորովին արամարանական չե: Ի՞նչ
հիման վրա յեն պրոլետարիատից մե-
ծահոգություն սկահանջում բուրժուա-
զիայի նկատմամբ: Մի՛թե բուրժուա-
զիան Արևմուտքում, իշխանության
գլուխ գտնվելով, թեկուղ ամենափոքք
մեծահոգություն ե ցուցաբերում բան-
վոր դասակարգի նկատմամբ: Մի՛թե
նա ընդհատակ չի քշում բանվոր
դասակարգի իսկապես հեղափոխա-
կան կուսակցություններին: Ի՞նչ հիման
վրա յեն ԽՍՀՄ պլոտետարիատից մեծա-
հոգություն սկահանջում դեպի իր դա-
սակարգային թշնամին: Յես կարծում
եմ, վոր տրամարանությունը պարտա-
վորեցնում ե: Նա, ով մտածում ե
բուրժուազիային նրա քաղաքական ի-
րավունքները վերադարձնելու հնարավո-
րության մասին, նա պետք ե, յեթէ նա
ուզում ե տրամարանական լինել, ավե-
լի հեռուն գնա և Փարբեկաներն ու
գործարանները, յերկաթուղիներն ու

բանկերը բուրժուազիային վերադարձ-
նելու հարցն ես զնի: Պատվիրա-
կության ինդիբն եր՝ պարզել, թե ինչ
կերպ կարող են իրենց լեզաւ արտա-
հայտությունը գտնել բանվոր դասա-
կարգի ու դյուզայտության մեջ յեղած
այն կարծիքները, վորոնք տարբեր են
կոմկուսակցության կարծիքներից: Ախալ
կլիներ բանն այնպես հասկանալ, թե
պատվիրակությունը հետաքրքրվում ե
բուրժուազիային քաղաքական իրա-
վունքներ տալու հարցով, այն հարցով,
թե բուրժուազիան ինչպես կարող ե
իր կարծիքներն ի հայտ բերելու լեզաւ
արտահայտություն գտնել: Խոսքը հենց
այն մասին ե, թե ինչ կերպ կարող են
իրենց լեզաւ արտահայտությունը գլու-
նել բանվոր դասակարգի ու դյուզա-
յտության մեջ յեղած այն կարծիքները,
վորոնք տարբեր են կոմկուսակցության
կարծիքներից:

Մեկ ուրիշ պատվիրակ: Այդ տար-
53

րեր կարծիքները կիարողանային իրենց
արտահայտությունը զանել բանվոր
դասակարգի մասսայական կազմակեր-
պություններում, արհմիություններում
և այլն:

Ստալին: Շատ լավ: Հետեարար՝
խոսքը բուրժուազիայի քաղաքական
իրավունքների վերականգնման մասին
չե, այլ կարծիքների պայքարի մասին
բանվոր դասակարգի ու գյուղացիու-
թյան ներսում: Արդյոք ներկայումս
կարծիքների պայքար տեղի ունի՞ բան-
վորների ու գյուղացիության աշխատա-
վոր մասսաների շրջանում: Անպայման
տեղի ունի: Զի կարող լինել, վոր մի-
ւիսնավոր բանվորներն ու գյուղացինե-
րը միանման մասնաւում: Այդպիսի բան
կյանքում չի լինում: Նախ, բանվորնե-
րի ու գյուղացիների միջև մեծ տար-
բերություն կա թե՛ նրանց տնտեսա-
կան գրության իմաստով, թե՛ այս
կամ այն հարցերի վերաբերյալ նրանց
հայացքների իմաստով: Յերկրորդ,

հայացքներում վորոշ տարբերություն-
ներ գոյություն ունեն բանվոր դասա-
կարգի մեջ եւ — դաստիարակության
տարբերություն, հասակների, խաւ-
նըլածքի տարբերություն, տարբերու-
թյուն բնիկ բանվորների ու գյուղից
յեկած բանվորների միջև և այլն: Այս
ամենը տանում ե գեղի կարծիքների
պայքար բանվորների ու գյուղացիու-
թյան աշխատավոր մասսաների մեջ,
վորն իր լեզաւ արտահայտությունն
ստանում ե ժողովներում, արհմիու-
թյուններում, կոռուպերացիայում, խոր-
հուրդների ընտրությունների ժամանակ
և այլն:

Բայց այժմ, պրոլետարական դիկտա-
տուրայի պայմաններում, տեղի ունե-
ցող կարծիքների պայքարի ու անցյա-
լում, մինչև Հոկտեմբերյան հեղափո-
խությունը, տեղի ունեցած կարծիքնե-
րի պայքարի միջև արմատական տար-
բերություն գոյություն ունի: Այն ժա-
մանակ, անցյալում, կարծիքների պայ-

Քարը բանվորների ու աշխատավոր
դյուլպացիների շրջանում՝ կենտրոնա-
նում եր զգացմաղես կալվածաներ-
նին, ցարիզմը, բուրժուազիյն տա-
պալելու հարցերի վրա, բուրժուական
կարգերը խորտակելու վրա։ Հիմա,
պրոլետարիատի դիկտատուրայի պայ-
մաններում, կարծիքների պայքարն ըն-
թանում ե վո'չ թե Խորհրդային իշխա-
նությունը ասպալելու, խորհրդային
կարգերը խորտակելու հարցերի չուրջը,
այլ Խորհրդային իշխանության որդան-
ները բարելավելու, նրանց աշխատանքը
բարելավելու հարցերի չուրջը։ Այսուղ
արմատական տարրերություն կա:
Զարմանալի վոչինչ չկա այն բանում,
վոր գոյություն ունեցող կարգերը հե-
ղափոխականորեն խորտակելու հարցի
չուրջը յեղած կարծիքների պայքարն
անցյալում հիմք եր տալիս, վորպեսդի
բանվոր դասակարգի ու դյուլպացիու-
թյան աշխատավորական մասսաների
ներսում յերեան դան միմյանց դեմ

մրցող միքանի կուսակցություններ։
Այդ կուսակցություններն եյին՝ բու-
ժեկաների կուսակցությունը, մենչեկ-
ների կուսակցությունը, ևսերների
կուսակցությունը։ Մյուս կողմից,
բնակ զժվար չե հասկանալ նաև այն,
վոր կարծիքների պայքարն այժմ,
պրոլետարիատի դիկտատուրայի որով,
պայքար, վորի նպատակն ե զոյու-
թյուն ունեցող խորհրդային կարգերի
վո'չ թե խորտակումը, այլ նրանց բա-
րելավումն ու ամբազնդումը, բանվոր-
ների ու զյուղի աշխատավորական
մասսաների շրջանում միքանի կուսակ-
ցությունների զոյության համար
սնունդ չի տալիս։ Ահա թե ինչու մի-
այն մի կուսակցության, կոմունիստ-
ների կուսակցության լեդալությունը,
այդ կուսակցության մոնոպոլիան վո'չ
միայն առարկություններ չի առաջաց-
նում բանվորների ու աշխատավոր
գյուղացիների շրջանում, այլ, ընդհա-
կառակն, ընկալում ե վորպես ինչ-

վոր անհրաժեշտ ու ցանկալի մի բան :

Մեր կուսակցության՝ վորպես յերկուում միակ լեզար կուսակցության՝ գրությունը (կոմկուսակցության մոնուպուլիս) արհեստական և միտումով հնարքած վորեն բան չե : Այսպիսի գրությունը չի կարող ստեղծվել արհեստականորեն, վարչական մեքենայությունների և այլնի միջոցով : Մեր կուսակցության մոնուպուլիսն կյանքից ե աճել, պատմականորեն կաղմակորպվել վորպես արդյունք այն բանի, վորես-երների ու մենչելիկների կուսակցությունները մեր իրականության պայմաններում վերջնականապես սնանկացան ու ասպարեզից վայր իջան : Ի՞նչ ելին ես-երների ու մենչելիկների կուսակցություններն անցյալում : Բուրժուական ազգեցությունը պրոլետարիատի մեջ անցկացնողներ : Ի՞նչո՞վ երսնվում ու պահպանվում այդ կուսակցությունների գոյությունը մինչև 1917թվի հոկտեմբերը : Բուրժուաների դա-

սակարգի առկայությամբ, վերջապես բուրժուական իշխանության առկայությամբ : Մի՛թե սկարզ չե, վոր բուրժուազիայի տապալմամբ պետք է անհետանային այդ կուսակցությունների գոյության հիմքերը : Իսկ ի՞նչ դարձան այդ կուսակցությունները 1917թվի հոկտեմբերից հետո : Նրանք դարձան կապիտալիզմի վերականգնման ու ոլորետարիատի եշխանության տապալման կուսակցություններ : Մի՛թե պարզ չե, վոր այդ կուսակցությունները պետք է ամեն մի հոգ ու ամեն մի պետք առցություն կորցնելին բանվորների աղջեցություն աշխատավորական մասսաների ըրջանում :

Բանվոր զասակարդի վրա աղջեցություն ունենալու համար կոմունիստների կուսակցության և ես-երների ու մենչելիկների կուսակցությունների միջնեղանից պայքարը յերեկվանից չեղակալում էնսկավել : Նրա սկիզբը համարում էնսկավարդի շարժման

առաջին նշանների մոմենտը Ռուսաստանում, գեսաս 1905 թվից առաջ: 1903 թ. մինչև 1917 թվի հոկտեմբերը յեղած ժամանակաշրջանը մեր յերկրի բանվոր դասակարգի մեջ կարծիքների կատարի պայքարի ժամանակաշրջան է, բոլշևիկների, մենչեւիկների ու եսերիների միջև բանվոր դասակարգի մեջ ունենալիք ազգեցության համար մզկող պայքարի ժամանակաշրջան: Այդ ժամանակաշրջանում ԽՍՀՄ բանվոր դասակարգը յերեք հեղափոխության բոլով անցավ: Նա այդ հեղափոխությունների կրակի մեջ եր փորձում ու սոսուլում այդ կուսակցություններին, նրանց պիտանիությունը պրոլետարական հեղափոխության դործի համար, նրանց պրոլետարական հեղափոխականությունը: Յեկանա, 1917 թվի հոկտեմբերյան որերին, յերբ պատմությունն ամփոփեց անցյալ ամբողջ հեղափոխական կռվի արդյունքները, յերբ պատմությունն իր կշեռքով կըսեց բանվոր դա-

տակարդի ներսում կռվող կուսակցությունների տեսակարար կշիռը, — ԽՍՀՄ բանվոր դասակարգը, վերջապես, կատարեց վերջնական ընտրությունը՝ կանդ առնելով կոմունիստական կուսակցության՝ վորսես միակ պրոլետարական կուսակցության՝ վրա: Ինչո՞վ բացատրել այն փաստը, վոր բանվոր դասակարգի ընտրությունը կանդ առնել կոմունիստական կուսակցության վրա: Մի՞թե սա փաստ չէ, վոր բոլշևիկները և ենինը ազի խորհրդում, որինակ, 1917 թվի ապրիլին, անհշան փոքրամասնություն եյին: Մի՞թե սա փաստ չէ, վոր եսերներն ու մենչեւիկներն այն ժամանակ խորհրդադներում հոկտյական մեծամասնություն ունեյին: Մի՞թե սա փաստ չէ, վոր մինչհոկտեմբերյան որերին իշխանության ամբողջ ապարատն ու հարկադրման լույսը միջոցները գտնվում եյին եսերների ու մենչեւիկների կուսակցությունների ձեռքում, վորոնք բլոկ եյին կազմել

բուրժուազիայի հետ: Սա բացատրվում
է նրանով, վոր կոմկուսակցությունն
այն ժամանակ պատերազմի լիկիդա-
ցիայի, անհապաղ դեմոկրատական
հաշտության կողմնակից եր, մինչդեռ
ես-երների ու մենչեկիների կուսակցու-
թյունները պաշտպանում եյին «պատե-
րազմը մինչև հաղթական վախճան»,
իմպերիալիստական պատերազմի շարու-
նակումը: Սա բացատրվում է նրանով,
վոր կոմկուսակցությունն այն ժամա-
նակ կերենսկու կառավարության տա-
պալման, բուրժուական իշխանության
տապալման, Փարքիկաների ու գործա-
րանների, բանկերի ու յերկաթուղինե-
րի աղջայնացման կողմնակից եր,
մինչեռ մենչեկիների ու ես-երների
կուսակցությունները կովում եյին հա-
նուն կերենսկու կառավարության ու
պաշտպանում եյին բուրժուազիայի
իրավունքները Փարքիկաների ու գոր-
ծարանների վերաբերմամբ, բանկերի
ու յերկաթուղիների վերաբերմամբ:

Սա բացատրվում է նրանով, վոր կո-
մունիսաների կուսակցությունն այն
ժամանակ կողմնակից եր կալածատի-
րական հողերի անհապաղ բանադրավ-
ման հոգուտ գյուղացիների, մինչդեռ
ես-երների ու մենչեկիների կուսակցու-
թյուններն այդ հարցը հետաձգում
եյին մինչև Սահմանադիր ժողովը,
վորի գումարումն, իր հերթին, հետա-
ձգում եյին անորոշ ժամանակով: Ել
ի՞նչ զարմանալու բան կա այստեղ,
յեթե բանվորներն ու գյուղացիական
չքաղաքացիությունը վերջապես ընտրու-
թյուն կատարեցին հոգուտ կոմունիս-
տական կուսակցության: Ել ի՞նչ զար-
մանալու բան կա այստեղ, յեթե ես-
երների ու մենչեկիների կուսակցու-
թյուններն այնպես արագ կերպով դե-
պի հատակն իջան: Ահա թե ինչն ե
պատճառը, վոր իշխանության գլուխ
կոմունիստական կուսակցությունն ան-
ցալ:

Հետազա ժամանակաշրջանը, 1917

թվի հետհոկումը բյան ժամանակաշըրս-
ջանը, քաղաքացիական պատերազմի
ժամանակաշըրջանը մենչեւիկների ու ես-
երների վերջնական կործանման ժամա-
նակաշըրջանն եր, բոլշևիկների կուսակ-
ցության վերջնական հաղթանակի ժա-
մանակաշըրջանը։ Մենչեւիկներն ու ե-
սերներն իրենք հետացըրին այդ ժա-
մանակաշըրջանում կոմկուսակցության
հաղթանակը։ Մենչեւիկյան ու ես-երա-
կան կուսակցությունների բեկորները
Հռկտեմբերյան հեղաշըրջան ժամանակ
ջախջախած ու հատակ իջեցված լի-
նելով՝ սկսեցին կապվել կուլակների
հակահեղափոխական ապստամբություն-
ների հետ, բլոկ կազմեցին կուչա-
կյանների ու գենիլլինյանների հետ, ծա-
ռայելու գնացին Անտանտի մոտ և
բանվորների ու գյուղացիների աչքում
վերջնականապես թաղեցին իրենց։ Ան-
ողիսի պատկեր ստեղծվեց, վոր ես-եր-
ներն ու մենչեւիկները, վորոնք բուր-
ժուական հեղափոխականներից բուր-

ժուական հակահեղափոխականների եյին
վերածվել, ոգնում եյին Անտանտին
խեղդելու նոր, խորհրդային Ռուսաս-
տանը, մինչդեռ բոլշևիկների կուսակ-
ցությունը, իր շուրջը միավորելով
այն ամենը, ինչ կենդանի յեր ու հե-
տափոխական, բանվորների ու գյուղա-
զիների ավելի ու ավելի նոր ջոկատներ
եր վոտքի հանում պայքարելու հանուն
սոցիալիստական հայրենիքի, պայքա-
րելու ընդդեմ Անտանտի։ Միանգամայն
բնական ե, վոր կոմունիստների հաղ-
թությունն այս ժամանակաշըրջանում
պետք ե հասցնել ու իրոք հասցընց
ես-երների ու մենչեւիկների լիակատար
պարտությանը։ Ել ի՞նչ զարմանալու
բան կա այստեղ, յեթե այս ամենից
հետո կոմկուսակցությունը դարձավ
բանվոր դասակարգի ու գյուղացիական
չքանվորության միակ կուսակցությունը։
Ահա թե ինչպես կազմակորվեց մե-
զանում կոմկուսակցության։ Վորպես

յերկրի միակ լեզաւ կուսակցության՝
մոնուպոլիսն:

Դուք խոսում եք բանվորների ու
գյուղացիների շրջանում տեղի ունեցող
կարծիքների պայքարի մասին այժմ,
պըուղետարական դիկտատորայի պայ-
մաններում։ Յես արդեն ասացի, վոր
կարծիքների պայքար կա և կլինի, վոր
առանց դրան անհնարին ե առաջ շարժ-
վելը։ Բայց կարծիքների պայքարը
բանվորների շրջանում այժմյան պայ-
մաններում ընթանում ե վո՞չ թե խոր-
հըրդային կարգերի ասպալման վերա-
բերյալ սկզբունքային հարցերի շուրջը,
այլ խորհուրդների բարելավման, խոր-
հըրդային որդանների սխալների ուղղղ-
ման գործնական հարցերի շուրջը,
հետեւաբար՝ Խորհրդային իշխանության
ամրացման շուրջը։ Միանդամայն հաս-
կանալի յե, վոր կարծիքների այլպի-
սի պայքարը կարող ե միայն ամրա-
պնդել ու կատարելալործել կոմունիս-
տական կուսակցությանը։ Միանդա-

մայն հասկանալի յե, վոր կարծիքների
այլպիսի պայքարը կարող ե միմիայն
ամրապնդել կոմիուսակցության մոնո-
պոլիսն։ Միանդամայն հասկանալի յե,
վոր կարծիքների այլպիսի պայքարը
չի կարող սնունդ տալ, վորպեսովի
ուրիշ կուսակցություններ կազմակոր-
վեն բանվոր դասակարգի ու աշխատա-
վորական գյուղացիության ընդերքում։

5-րդ ՀԱՐՑԻ ԱՐԴՅՈՒՆ կույք կարո՞ղ
ել համառոտակի հաղորդել մեզ ձեր
և Տրոցկու միջև յեղած հիմնական
տարակարծությունները։

ՊԱՍԱՍԻԼԱՆԻ ԱՊԱՎԾ յես
պետք ե ասեմ, վոր Տրոցկու հետ
ունեցած տարակարծություններն անձ-
նական տարակարծություններ չեն։ Յե-
նական տարակարծություններն անձնական
ընույթ կրեյին, կուսակցությունը վոչ
մի ժամ չեր զրադի այդ գործով,
վորովհետեւ նա չի սիրում, վոր առան-
ձին անձեր ցայտադրմեն (ՎԵՐԱԿՎԱ-
ՅԵ)

լուս): Ակներեւ ե, վոր խոսքը վերաբերում ե կուսակցության մեջ յեղող տարածայնություններին: Յես այսպես հասկացա այդ հարցը: Այո՛, այդ տարածայնությունները գոյություն ունեն կուսակցության մեջ: Այդ տարածայնությունների բնույթի մասին մոտ ժամանակներս բավական մանրամասն պատմեցին իրենց զեկուցումներում՝ ընկ: Ոիկովը—Մոսկվայում, ընկ: Բուխարինը—Լենինգրադում: Այդ զեկուցումները հրապարակված են: Այն առենին, ինչ ասված ե այդ զեկուցումներում՝ տարածայնությունների մասին, յես վոչինչ չունեմ ավելացնելու: Յեթե գուք այդ գոկումնենտները չունեք, յես կարող եմ ճարել զբանք ձեզ համար: (Պատվիրակությունը հաղորդում է, վոր ինքն ունի այդ դոկումենտները):

Պատվիրակներից մեկը: Մեր վերադարձին մեզ կհարցնեն այդ տարածայնությունների մասին, բայց մենք չու-

նենք բոլոր դոկումենտները: Որինակ, մենք չունենք «ՏՅ»-ի պլատֆորմը: ՍԱԼԻՒՆ: Յես այդ պլատֆորմը չեմ ստորագրել: Յես իրավունք չունեմ տնօրինություն անելու ուրիշների դոկումենտների նկատմամբ: (Ծիծալ):

Երդ ՀԱՐՑ: Կապիտալիստական յերկրներում արտադրության զարգացման հիմնական մղումը հիմնված ե շահույթ քաղելու հույսի վրա: Այդ մղումը, իհարկե, հարաբերաբար, քացակայում ե ԽՍՀՄ մեջ: Ի՞նչն ե փոխարինում դրան, և այդ փոխարինումը, ձեր կարծիքով, վո՞րքան եփեկտավոր ե: Արդյոք նա կարո՞ղ է մնալ յուն լինել:

ՊԱՏՎԱԼԻՍԱՆ: Այդ ճիշտ ե, վոր կապիտալիստական տնտեսության հիմնական շարժիչը չունույթ քաղելն ե: Ճիշտ ե նույնպես և այն, վոր չափույթ քաղելը մեր սոցիալիստական արդյունաբերության վո՞չ նպատակն ե

Հանդիսանում, վո՞չ եւ շարժիչը:
Ապա այսպիսի դեսկում ի՞նչն և մեր
ինգուստը իսկը շարժիչը հանդիսանում:

Ամենից առաջ՝ այն հանդամնքը,
վոր Փարբիկաներն ու զործարանները
մեղանում ողատկանում են ամբողջ
ժողովրդին և վո՞չ թե կապիտալիստներին, վոր Փարբիկաներն ու զործարանները կառավարում են վո՞չ թե կապիտալիստների կամակատարները, այլ բանվոր գասակարդի ներկայացուցիչները: Այն բանի գիտակցությունը, վոր բանվորներն աշխատում են վո՞չ թե կապիտալիստի համար, այլ իրենց սեփական սեփության համար, իրենց սեփական դասակարգի համար,—այս գիտակցությունը հսկայական շարժիչուժ և հանդիսանում մեր արդյունաբերության զարգացման ու կառարելազորման զործում: Հարկավոր և նշել, վոր Փարբիկաների ու զործարանների դիրեկտորների հսկայական մեծամասնությունը մեղանում բանվորներն են,

վորոնց նշանակում և ժողովրդական Տնտեսության Կերպույժն Խորհուրդը՝ համաձայնեցնելով արհմիությունների հետ, ընդվարում դիրեկտորներից վո՞չ մեկը կարող իր պոստում մնալ բանվորների կամ համապատասխան արհմիությունների կամքին հակառակ: Այնուհետև հարկ և նշել, վոր յուրաքանչյուր գործարանում կամ Փարբիկայում կամ կայում կա իր գործարանային կամ Փարբիկային կոմիտեն, վորին բանվորներն են ընտրում, և վորը վերահսկության և յենթարկում ձեռնարկության աղմինիստրացիայի գործունեյությունը: Հարկ և, վերջապես, նշել, վոր յուրաքանչյուր արդյունաբերական ձեռնարկության մեջ կան բանվորների արտադրական խորհրդակցություններ, ուր մտնում են ավլալ ձեռնարկության բոլոր բանվորները, և վորտեղ բանվորներն ստուգում են ձեռնարկության դիրեկտորի ամբողջ աշխատանքը, քիրեկտորի և արհմինիստրականի աղմինիս-

տրացիայի աշխատանքի պլանը, նշում
են սխալներն ու թերությունները և
հնարավորություն ունեն այդ թերու-
թյուններն ուղղելու արհմիություննե-
րի միջոցով, կուսակցության միջոցով,
Խորհրդային հչխանության որդանների
միջոցով: Դժվար չե հասկանալ, վոր
բոլոր այս հանդամանքներն արմատա-
պես փոխում են ինչպես բանվորների
գրությունը, այնպես ել կարգ ու կա-
նոնը ձեռնարկության մեջ: Յեթե կա-
պիտալիզմի որով բանվորը Փարբիկան
դիտում ե վորպես բանտ, ապա խոր-
հըրդային կարգերում բանվորը Փարբի-
կային նայում ե արդեն վո՛չ թե վոր-
պես բանտի, այլ վորպես իր համար
մոտիկ ու հարազատ մի բանի, վորի
դարձացմամբ ու բարելավմամբ նա
կենսականորեն շահագրգռված ե: Հա-
զիւ թե հարկ կա ապացուցելու, վոր
բանվորների այս նոր վերաբերմունքը
դեպի ձեռնարկությունը, բանվորների
այս մոտիկության զգացմունքը դեպի

ձեռնարկությունը, մեր ամբողջ ար-
դյունաբերության մեծագույն չարժիչն
է: Այս հանդամանքով պետք ե բացա-
տրել այն փաստը, վոր որեցոր աճում
ե արտադրության տեխնիկայի բնագա-
վառի՝ բանվորներից յեւած գյուտա-
րանների ու արդյունաբերության կազ-
մակերպիչների քանակը:

Եթերկորդ՝ այն հանդամանքը, վոր
արդյունաբերությունից ստացվող յե-
կամուտները մեզանում դնում են վո՞չ
թե առանձին անհատների հարստաց-
ման, այլ արդյունաբերության հետա-
գա ընդլայնման համար, բանվոր դա-
սակարգի նյութական ու կուլտուրական
դրության բարելավման համար, ինչ-
պես բանվորներին, այնպես ել դյուղա-
ցիներին անհրաժեշտ արդյունաբերա-
կան ապրանքների եժանացման, այսին-
քնն՝ դարձյալ աշխատավոր մասսաների
նյութական դրության բարելավման
համար: Կապիտալիստը չի կարող իր
յեկամուտները հատկացնել բանվոր

դասակարգի բարեկեցության բարձրաց-
մանը։ Եա շահույթների համար և ապ-
րում։ Այլապես նա կապիտալիստ չեր
լինի։ Եա շահույթներ և քաղում, վոր-
պեսզի դրանք գումարի-դարձնի ավե-
լադիր կապիտալ և արտահանի ավելի
նվազ զարգացած յերկրները, վորոնք
տառապում են կապիտալների պակա-
սությունից, նոր, ե'լ ավելի խոչոր
շահույթներ քաղելու նպատակով։ Այս-
պես կապիտալները Հյուսիսային Ամե-
րիկայից հոսում են Չինաստան, Ին-
դոնեզիա, Հարավային Ամերիկա, Յել-
լուպա, Ֆրանսիայից — Ֆրանսական
դաղութները, Անգլիայից—անգլիական
դաղութները։ Մեզանում բանն այլ և,
վորովհետեւ մենք դաղութային քաղա-
քականություն չենք վարում ու այդ-
պիսին չենք ընդունում։ Մեզանում
արդյունաբերությունից ստացվող յե-
կամուտները մնում են յերկրում՝
ինդուստրիայի հետագա ընդլայնման
դործի համար, բանվորների դրության

բարելավման դործի համար, արդյու-
նաբերական ապրանքների եժանացման
միջոցով ներքին չուկայի, այդ թվում
դյուզացիական չուկայի տարսղությու-
նը բարձրացնելու դործի համար։ Ար-
դյունաբերությունից ստացվող շա-
հույթների 10 տոկ. մեզանում դործա-
դրվում և բանվոր գասակարգի կենցա-
զի բարելավման վրա։ Բանվորների
դրամական աշխատավարձի 13 տոկոսը
մեզանում դործադրվում և բանվոր
գասակարգին ոլետության հաշվին ապա-
հովագրելու վրա (դա տարեկան 800
միլիոն ռուբլուց ավելի յե կազմում)։
Յեկամուտների վրաց մասը (յես հիմա
չեմ կարող ասել—հատկապես վոր
մասը) գործողրվում և կուլտուրական
կարիքների, Փարբիկագործարանային
աշակերտության ու բանվորների ար-
ձակուրզների վրա։ Այդ յեկամուտնե-
րի բավական նշանակալի մասը (յես
հիմա զարգացած չեմ կարող ասել—հատ-
կապես վոր մասը) գործադրվում և

բանվորների դրամական աշխատավարձի ամենամյա բարձրացման վրա։ Արդյունաբերությունից ստացվող յեկամուտների մնացած մասը ծախսվում է արդյունաբերության հետագա ընդլայնման վրա, հեն գործարանների նորոգման վրա, նոր գործարանների կառուցման վրա, վերջապես, արդյունաբերական ասլրանքների եժանացման վրա։ Այս հանդամանքների հսկայական նշանակությունը մեր ամբողջ արդյունաբերության համար այն է, վոր ա) նրանք հեշտացնում են դյուղատնտեսության մերձեցումն ինդուստրիայի հետ և քաղաքի ու գյուղի միջև յեղած հակադրությունների հարթումը. բ) նրանք նպաստում են ներքին—քաղաքային ու դյուղական—չուկայի տարրողության աճմանը՝ հենց դրանով ել անընդհատ աճող բազա ստեղծելով ինդուստրիայի հետագա ծավալման համար։

Վերջապես՝ այն հանգամանքը, վոր

արդյունաբերության ազդայնացման փաստը հեշտացնում է ի մի առած ամբողջ արդյունաբերական տնտեսության պլանային վարումը։
 Մեր արդյունաբերության այս ազդեկաներն ու շարժիչները մշտական գործոններ կլինե՞ն արդյոք։ Արդյոք նրանք կարո՞ղ են մշտապես գործող ֆակտորներ լինել։ Այո՛, նրանք անպայման կլինեն մշտապես գործող աղջակներ ու շարժիչներ։ Յեվ վորդակները գարգանա մեր ինդուստրիան ավելի զարգանա մեր ինդուստրիան, այնքան ավելի յեն աճելու այդ գործոնների ուժն ու նշանակությունը։

7-րդ ՀԱՅՑ : ԽՍՀՄ-ն ի՞նչ չափով կարող է համագործակցել այլ յերկրների կապիտալիստական արդյունաբերության հետ։ Կա՞ արդյոք վորոշ սահման այդպիսի համագործակցության համար, թե՞ դա սույն մի փորձ ե՞ պարզելու համար, թե վո՞ր մասում

ի՞նչպիսի համագործակցություն է
հնարավոր և վո՞ր մասում՝ վոչ:

ՊԱՏՍ.ՍԽԱՆ: Խոսքը, յերկի, վերա-
բերում ե կապիտալիստական պետու-
թյունների հետ արդյունաբերության
բնագավառում, առևտրի բնագավառում
և, զուցե, դիվանագիտական հարաբե-
րությունների բնագավառում ժամանա-
կավոր համաձայնություններ կնքելուն:
Յես կարծում եմ, վոր յերկու հակա-
գիր սիստեմների—կապիտալիստական
սիստեմի ու սոցիալիստական սիստե-
մի—առկայությունը չի բացառում
այդպիսի համաձայնությունների հնա-
րաբերությունը: Յես կարծում եմ,
վոր այդպիսի համաձայնությունները
հնարավոր ու նպատակահարմար են
խաղաղ զարգացման պայմաններում:
Արտահանությունն ու ներմուծումն
ամենահարմար հողն են այդպիսի հա-
մաձայնությունների համար: Մեզ հար-
կավոր են՝ սարքավորում, հումք

(որինակ՝ բամբակ), կիսափարբիկաս-
ներ (մետաղի և այլն), իսկ կապիտա-
լիստներն այդ ապրանքների վաճառա-
հանման կարիք ունեն: Ահա ձեզ հա-
մաձայնության հող: Կապիտալիստնե-
րին հարկավոր են՝ նավթ, փայտեղեն,
հացամթերքներ, իսկ մեզ անհրաժեշտ
ե վաճառահանել այդ ապրանքները: Ա-
հա ձեզ համաձայնության համար դար-
ձյալ մի հող: Մեզ վարկեր են հար-
կավոր, կապիտալիստներին հարկավոր
են լավ տոկոսներ այդ վարկերի հա-
մար: Ահա ձեզ ելի մեկ հող համա-
ձայնության համար՝ արգեն վարկի
գծով, ընդգործում հայտնի յե, վոր
խորհրդային որդանները վարկերի վե-
րաբերմամբ ամենաճշտապահ վճարող-
ներն են:

Նույն այդ բանը կարելի յե ասել
դիվանագիտական բնագավառի մասին:
Մենք խաղաղության քաղաքականու-
թյուն ենք վարում և մենք պատրաստ
ենք փոխադարձ չհարձակման պակտեր

սառըրազբելու բուրժուական պետությունների հետ։ Մենք խաղաղության քաղաքականություն ենք վարում և մենք պատրաստ ենք զինաթափման վերաբերյալ համաձայնության դիմելու՝ ընդհուալ մինչև մշտական բանակների լիակատար վոչնչացումը, վորի մասին մենք ամբողջ աշխարհի առաջ հայտարարել ենք գեռևս ձենովայի կոնֆերենցիայում։ Ահա ձեզ հող դիվանագիտական գծով համաձայնության համար։

Այդ համաձայնությունների սահմանները։ Սահմանները դրվում են յերկու սիստեմների հակառակությամբ, —սիստեմներ, վորոնց միջև տեղի յեռնումը մրցակցություն, պայքար։ Այն շրջանակներում, վոր այդ յերկու սիստեմներն են թույլ տալիս, բայց միայն այդ շրջանակներում, համաձայնությունները լիովին հնարավոր են։ Այդ մասին ե խոսում Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի և այլոց հետ կընքած համաձայնությունների վորձը։

Արդյո՞ք այդ համաձայնությունները սույն եքսպերիմենտ են, թե նրանք կարող են ունենալ ավելի կամ պակաս յերկարատև բնույթ։ Դա կախված է վո՞չ միայն մեզանից, դա կախված է նույնական մեր կոնտրավենտներից (պայմանավորվող կողմերից)։ Դա կախված է ընդհանուր իրադրությունից։ Պատերազմը կարող է դիսիվայր չուռտալ բոլոր ու ամեն տեսակի համաձայնությունները։ Դա կախված է, վերջապես, համաձայնության պայմաններից։ Ստրկական պայմաններ մենք չենք կարող ընդունել։ Մենք համաձայնություն ունենք Հարբիմանի հետ, վորը շահագործում է մանդանի հանգերը Վրաստանում։ Համաձայնությունը կնքված է 20 տարով։ Ինչպես տեսնում եք, բոլորովին ել փոքր ժամանակ չե։ Մենք համաձայնություն ունենք նույնական լենա-Գուլֆիլդու ընկերության հետ, վորը վոսկի յերգությունահանում Սիբիրում։ Համաձայնությունը կնքված

և 30 տարով, —ե՛ւ ավելի յերկարաւոնեմի ժամկետով։ Վերջապես, համաձայնություն կա ձագողնիայի հետ՝ Սախալինում նավթաղբյուրներն ու ածխահանքերը շահագործելու վերաբերյալ։

Մենք կցանկանայինք, վոր այս համաձայնություններն ունենան քիչ թե շատ հաստատուն բնույթ։ Բայց այդ կախված ե, իհարկե, վո՞չ միայն մեզանից, այլև մեր կոնտրապենտներից։

8-րդ ՀԱՐՅՈՒՔ : Վորո՞նիք են Ռուսաստանի հիմնական տարբերությունները կապիտալիստական պիտություններից այն ժաղաքականության մեջ, վոր նա վարում ե ազգային փոքրամասնությունների նկատմամբ։

ՊԱՏԱՍԽԱՆՈՒՅՈՒՆ : Խոսքը, յերկե, վերաբերում ե ԽՍՀՄ այն ազգություններին, վորոնց առաջներում ցարիզմն ու ոռուսական շահագործող դաստիարակերը կեղեքում ելին, և վորոնք չունեյին իրենց պետականությունը։ Հիմնական տարբե-

րությունն այն է, վոր կապիտալիստանկան պետականություններում զոյություն ունեն ազգային ճնշում ու ազգային ստրկացում, իսկ մեզանում, ԽՍՀՄ մեջ, արմատապես վոչնչացված են թե՛մեկը, թե՛ մյուսը։ Այնտեղ, կապիտալիստական պետականություններում, առաջին կարգի ազգերի, արտոնյալ ազգերի, «պետական» ազգերի կողքին զոյություն ունեն յերկրորդ կարգի ազգեր, «վոչպետական» ազգեր, վոչ-լիիրակ ազգեր, վորոնք զրկված են այս կամ այն իրավունքներից և, ամենից առաջ, պետական իրավունքներից։ Մեզանում, ԽՍՀՄ մեջ, ընդհանարակը, վոչնչացված են ազգային անհավասարության և ազգային ճնշման բոլոր այդ տարինումները։ Մեզանում բոլոր ազգերն իրավահավասար են ու սուլերեն, վորովհետև առաջներում տիրապետությունը պետքիուս ազգի ազգային ու պետական արտօնությունները վոչնչացված են։ Բանն, իհարկե, չե վերաբերում ազգու-

թյունների հավասարության վերաբերյալ գելլարացիաններին։ Ազգային հավասարության վերաբերյալ գելլարացիանները քիչ չունեն ամեն տեսակի ըուրժուական ու սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները։ Խօնչ արժեք ունեն գելլարացիանները, յեթե նրանք չեն կիրառվում կյանքում։ Բան այն է, վոր վոչնչացնենք այն դասակարգերը, վորոնք աղջային ճնշման կրողները, ստեղծիչներն ու կիրառողներն են։ Այդպիսի դասակարգեր եյին մեզ մոտ կալվածատերերը, կապիտալիստները։ Մենք տապալեցինք այդ դասակարգերին և հենց գրանով վոչնչացրինք աղջային ճնշման հնարավորությունը։ Յել հենց այն պատճառով, վոր մենք տապալեցինք այդ դասակարգերին, իսկական աղջային հավասարությունը մեզ մոտ հնարավոր գարձավ։ Հենց այս ե, վոր մեզանում կոչվում ե աղջությունների ինքնորոշման դաշտավարի իրականացումն ընդհուպ

անջատումը։ Հենց այն պատճառով մենք իրականացրել ենք աղջությունների ինքնորոշումը, հենց այդ պատճառով ել մեզ հաջող- վեց զուրս վանել ԽՍՀՄ տարբեր աղ- ջությունների աշխատավոր մասսաների փոխադարձ անվատահությունը, և աղ- ջությունները կամավորության հե- մունքներով միավորել վորպես մի միութենական պետություն։ Ներկա- յումս գոյություն ունեցող Խորհրդա- յին Սոցիալիստական Հանրապետու- թյունների Միությունը մեր աղջային քաղաքականության արդյունքն ե և այն ըստի արտահայտությունը, վոր ԽՍՀՄ աղջությունները հօժարակամ կերպով ֆերացիա յեն կազմել վորպես մի միութենական պետություն։ Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այսպիսի քաղաքականություն աղջային հարցում աներևակայելի յե կապիտալիստական յերկրներում, վորովհետեւ այնտեղ դեռ- և իշխանության դլուին են կանոնած

կապիտալիստները, վարունք ազգային
 ճնշման քաղաքականության ստեղծիչ-
 ներն ու կերտողներն են: Չի կարելի
 չնշել, որինակ, այն փաստը, վոր
 և ԱՇՄ բարձրակույն որդանի, — Խոր-
 հուրդների կենտրոնական գործադիր
 կոմիտեյի, — պլուս և կանոնած վո'չ թե
 անպայման ուսւ նախագահ, այլ վեց
 նախագահներ՝ և ԱՇՄ մեջ միավորված
 վեց դաշնակից հանրապետությունների
 թվի համաձայն, վորոնցից մեկը ուսւ
 և (Կալինին), մյուսը — ուկրաինացի
 (Պետրովսկի), յերրորդը — բելոռուս
 (Զերվյալով), չորրորդը — արտրեջանցի
 (Մուսաբեկով), հինգերորդը — թուրքմեն
 (Այթակով), վեցերորդը — ուզբեկ (Ֆայ-
 զուլլա Խոջիև): Այս փաստը մեր
 ազգային քաղաքականության պայմառ
 արտահայտություններից մեկն և: Ինչ
 ասել կուզի, վոր վոչ մի բուրժուական
 հանրապետություն, թեկուզ նա ամե-
 նադեմոկրատականը լինի, այսպիսի
 քայլի չեմ: Մինչդեռ այս քայլը

մեղ համար ինքնին հասկանալի մի
 փաստ և, վորը բղխում և ազգային հա-
 վասարության մեր ամբողջ քաղաքա-
 կանությունից:

9-րդ ՀԱՐՅՈՒԹՅՈՒՆ: Ամերիկյան բանվորական
 առաջնորդներն իրենց պայքարը կոմու-
 նիստների դիմ արդարացնում են յեր-
 կու հանգամանքով, 1) կոմունիստները
 քայլացնում են բանվորական շարժումը
 իրենց ֆրակցիոն պայքարով՝ միու-
 թյունների ներսում և իրենց հարձա-
 կումներով վոչ-պադիկալ պաշտօնատար
 անձերի վրա՝ արհմիություններում.
 2) ամերիկյան կոմունիստները կարգա-
 դրություններն ստանում են Մոսկվայից
 և այս պատճառով չեն կարող արհմիու-
 թենական լավ գործիչներ լինել, վոր-
 չափով վոր նրանց լոյալությունը ո-
 տարերկրյա կազմակերպության նկատ-
 մամբ գերազանցում և իրենց միության
 նկատմամբ ունեցած նրանց լոյալու-
 թյունից: Այս դժվարությունն ի՞նչպես

կարող ե վերացվել, վորպեսզի ամերիկյան կոմունիստները կարողանային միատեղ աշխատանք կատարել ամերիկյան բանվորական շարժման մյուս բջիջների հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Յես կարծում եմ, վոր ամերիկյան բանվորական լիդերների այն փորձը, վոր նրանք անում են կոմունիստների գեմ մղած իրենց պայքարն արդարացնելու համար, վոչ մի քննադատության չի դիմանում: Դեռ վոչ վոք չի ապացուցել ու չի ապացուցի, վոր կոմունիստները քայլայում են բանվորական շարժումը: Բայց դրա փոխարեն հարկավոր ե լիովին ապացուցված համարել, վոր կոմունիստները բանվորական շարժման ամենանվիրված ու ամենախիզախ մարտիկներն են ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Ամերիկայում: Մի՞թե սա փաստ չէ, վոր բանվորների դորժադուլների ու ցուցերի ժամանակ կոմունիստներն ըն-

թանում են բանվոր դասակարգի առաջին շարքերում՝ իրենց վրա ընդունելով կապիտալիստների առաջին հարվածները, մինչդեռ ուժորմիստական բանվորական լիդերներն այդ ժամանակ թաղնվում են կապիտալիստների հետնարակերում (և զանորում): Կոմունիստներն ի՞նչպես կարող են չքննադատել ուժորմիստական բանվորական լիդերների վախկոսությունն ու հետադիմականությունը: Մի՞թե պարզ չէ, վոր այդպիսի քննադատությունը կարող ե միայն աշխուժացնել ու ամբայնել բանվորական շարժումը: Ճշմարիտ ե, այդպիսի քննադատությունը կործանում ե հետադեմ բանվորական լիդերների հեղինակավորությունը: Ե՛, այսուեղ առանձին ինչ բան կա վոր: Բանվորական հետադեմ լիդերները թող պատասխանեն հակաֆնադատությամբ, և վոչ թե կոմունիստներին արհմիություններից գործս վրանդելով: Յես կարծում եմ, վոր Ամերիկայի բանվո-

բական շարժումը, յեթե նա ցանկա-
նում է ապրել ու ավելի զարգանալ,
չի կարող յուշ դնալ առանց կարծիք-
ների ու հոսանքների պայքարի՝ արհ-
միությունների ներսում։ Յես կարծում
եմ, վոր արհմիությունների ներսում
կարծիքների ու հոսանքների պայքարը,
հետաղեմ լիդերներին քննադատելը և
այլն դնալով ավելի ու ավելի կաճեն,
ինչպես ել վոր դիմադրեն դրան ռե-
ֆորմիստական բանվորական լիդերնե-
րը։ Իսկ Ամերիկայի բանվոր դասա-
կարգին բացարձակապես անհրաժեշտ է
կարծիքների այդպիսի պայքարն ու
այդպիսի քննադատությունը, վորպես-
զի նա կարողանա տարրեր հոսանքների
միջև ընտրություն կատարել ու վեր-
ջապես ինքնորոշվել վորպես ինքնու-
րույն կազմակերպված ուժ ամերիկյան
հասարակության ներսում։ Ամերիկյան
ռեֆորմիստական լիդերների դանդատ-
ները կոմունիստների դեմ լոկ այն են
վկայում, վոր նրանք համոզված են

իրենց արդարացի լինելուն, իրենց
դրությունն ամուր չեն զգում: Հենց
այս պատճառով ե, վոր նրանք քննա-
դասությունից վախենում են՝ ինչպես
ժանտախտից: Ուշաբըսալ ե, վոր ամե-
րիկյան բանվորական լիգերները տար-
բական դեմոկրատիայի աղելի վճռա-
կան հակառակորդներ են, քանի շատ
բուրդուածներ հենց նույն Ամերիկա-
յում:

Միանգամայն սխալ ե այն պնդումը,
թե ամերիկյան կոմունիստներն աշխա-
տում են «Մոսկվայից յեկող կարգա-
դրության համաձայն»։ Աշխարհում
դուք չեք գտնի այնպիսի կոմունիստ-
ներ, վորոնք համաձայնեցին գործել
դրսից յեկող «կարգավորությունների
համաձայն», իրենց համոզմունքների
դեմ, իրենց կամքի դեմ, իրադրության
ցուցաւմների հակառակ։ Բայց այդպի-
սի կոմունիստները, յեթե նրանք նույ-
նիսկ վորեն տեղ գոյություն ունենա-
յին, դուք անգամ չեյին արժենա։ Կո-

մունիստնելն ամենահամարձակ ու խիշ-
 ղախ մարդիկ են, նրանք կռիվ են
 մղում մի ամբողջ ծով թշնամիների
 դեմ: Կոմունիստների արժեքն, իմիջի
 այլոց, հենց այն ե, վոր նրանք կարո-
 ղանում են իրենց համոզմունքները
 պաշտպանել: Այս պատճառով տարորի-
 նակ ե ամերիկյան կոմունիստների մա-
 սին խոսել իրեն այնպիսի մարդկանց
 մասին, վորոնք իրենց համոզմունքները
 չունեն և ընդունակ են գործելու միայն
 դրսէց արվող «կարգադրություննե-
 րով»: Բանվորական լիդերների պնդու-
 մի մեջ ճիշտ ե միայն մի բան՝ հենց
 այն, վոր ամերիկյան կոմունիստները
 մտնում են կոմունիստների միջազգա-
 յին կազմակերպության մեջ և ժամա-
 նակ առ ժամանակ խորհրդակցում են
 այդ կազմակերպության կենտրոնի հետ
 այս կամ այն հարցերի շուրջը: Բայց
 այստեղ ի՞նչ վատ բան կա: Մի՞թե ա-
 մերիկյան բանվորական լիդերները դեմ
 են միջազգային բանվորական կենտրոն

կազմակերպելուն: Ճիշտ է, նրանք ԱԺ-
 ստերդամի կազմի մեջ չեն մտնում:
 Բայց նրանք այնտեղ չեն մտնում վո՛չ
 թե այն պատճառով, վոր նրանք մի-
 ջազգային բանվորական կենս չոնին դեմ
 են, այլ այն պատճառով, վոր նրանք
 Ամստերդամը չափաղանց ձախ կազմա-
 կերպություն են համարում: (Ծիծաղ):
 Ինչո՞ւ կապիտալիստները կարող են
 միջազգային մաստաբով կազմակերպ-
 վել, իսկ բանվոր դասակարգը կամ
 բանվոր դասակարգի մի մասը չպետք
 ե ունենան իրենց միջազգային կազմա-
 կերպությունը: Պարզ չե՞ արդյոք, վոր
 Գրինն ու նրա բարեկամներն Աշխա-
 տանքի Ամերիկյան Ֆեդերացիայից՝
 զրպարտում են ամերիկյան կոմունիստ-
 ներին՝ ստրկուն կը կնելով կատարա-
 լիստների լեզենդաները «Մոսկվայից
 յեկող կարգադրությունների» մասին:
 Կա՞ մարդիկ, վորոնք կարծում են,
 թե Կոմունիստական ինտերնացիոնալի
 անդամները Մոսկվայում բան ու գործ

Են չինել միայն այն, վոր նստել են ու
դիրեկտիվներ են գրում բարոք յերկըր-
ների համար: Քանի վոր կոմինտերնի
կազմի մեջ մտնող յերկըների քանակը
60-ից ավելի յէ, ապա կարող եք
պատկերացնել ձեզ կոմինտերնի ան-
դամների գրությունը, վորոնք չեն
քնում, չեն ուսում և միայն բան ու
գործերն այն ե, վոր նստել են ու գի-
շերցերեկ դիրեկտիվներ են գրում այդ
յերկըների համար: (Ծիծաղ): Յեկ ա-
մերիկան բանվորական լիդերները
մտածում են այս զվարճութիւններա-
յով քողարկել իրենց ահը կոմունիստ-
ների հանդեպ ու սքողել այն փաստը,
վոր կոմունիստներն Ամերիկայի բան-
վոր դասակարգի ամենահամարձակ ու
ամենանվիրված աշխատողներն են:

Պատվիրակությունը հարցնում է, թե
վո՞րն ե յելքն այսպիսի դրությունից:
Յես կարծում եմ, վոր այսուղ մեկ
յելք կա. թույլատրել կարծիքների ու
հոսանքների պայքարն Ամերիկայի

արհմիությունների ներսում, ուն գցել
կոմունիստներին՝ արհմիություններից
դուրս նետելու հետաղեմ քաղաքակա-
նությունը և Ամերիկայի բանվոր դա-
սակարգին հնարավորություն տալ այդ
հոսանքների միջև ազատ ընտրություն
անելու, վորովհետեւ Ամերիկայում գեռ
իրենց Հոկտեմբերյան հեղափոխությու-
նը չի յեղել, և այնտեղ բանվորները
դեռևս հնարավորություն չեն ունեցել
վերջնական ընտրություն անելու տար-
րեր հոսանքների միջև արհմիություն-
ներում:

10-րդ ՀԱՐՑ: Արդյոք ներկայումս
դրամ ուղարկվում ե Ամերիկա՝ ամե-
րիկյան կոմկուսակցությանը կամ
«Գեյլի Ռուրկը» կոմունիստական լրա-
գրին աշակցելու համար: Յեթէ վոչ,
ամերիկյան կոմունիստները տարեկան
վո՞րքան անդամակնարներ են մուծում
III ինտերնացիոնալ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Յեթէ խոսքը վերաբե-
95

բում և Ամերիկայի կոմկուսակցության և
III ինտերնացիոնալի փոխարարերու-
թյուններին, ապա յես պետք ե ասեմ,
վոր Ամերիկայի կոմկուսակցությունը,
վորպես Կոմունիստական ինտերնացիո-
նալի մի մասը, հավանորեն անդամակ-
ցական մուծումներ ե վճարում Կոմին-
տերնին, այնպես, ինչպես վոր Կոմին-
տերնը, վորպես միջազգային կոմունիս-
տական շարժման կենտրոն, պետք ե
կարծէլ, ուժերը ներածին չափով ա-
ջակցություն ե ցույց տալիս Ամերի-
կայի կոմկուսակցությանը, յերբ այդ
անհրաժեշտ ե գտնում: Յես կարծում
եմ, վոր սրանում զարմանալի ու ար-
տասովոր վոչինչ չկա: Իսկ յեթե խոս-
քը վերաբերում ե Ամերիկայի կոմկու-
սակցության և ԽՍՀՄ կոմկուսակ-
ցության փոխարարերություններին,
ապա յես պետք ե հայտարարեմ, վոր
յես չգիտեմ վոչ մի դեպք, յերբ ամե-
րիկյան կոմկուսակցության ներկայա-
ցուցիչներն ողնության համար դիմած

լինեն ԽՍՀՄ կոմկուսակցությանը:
Դուք կարող եք այս տարօրինակ հա-
մարել, բայց սա մի փաստ ե, վորը
խոսում ե ամերիկյան կոմունիստների
չափաղանց մեծ նրբանկատության մա-
սին: Բայց ի՞նչ կլիներ, յեթե Ամերի-
կայի կոմկուսակցությունը ողնության
համար դիմեր ԽՍՀՄ կոմկուսակցու-
թյանը: Յես կարծում եմ, վոր
ԽՍՀՄ կոմկուսակցությունն իր ու-
ժերը ներածին չափ ողնություն ցույց
կտար նրան: Իրոք, ի՞նչ արժեք կունե-
նար այն կոմկուսակցությունը, այն ել
իշխանության գլուխ կանգնած կոմկու-
սակցությունը, յեթե նա իր ու-
ժերը ներածի չափ ողնությունը
մերժեր կապիտալիզմի լծի տակ
դատնվող՝ ուրիշ յերկրի կոմկու-
սակցությանը: Յես կասեյի, վոր այդ-
պիսի կոմկուսակցությունը գոռչ ան-
գամ չեր արժենա: Յենթադրենք, թե
ամերիկյան բանվոր դասակարգը, իր
բուրժուազիային տապալելով, իշխա-

Նության հասալ, յենթագրենք, թե Ամերիկայի բանվոր դասակարգին, վոր հաղթել ե կապիտալիզմի դեմ մղած մեծ պայքարում, նրա ուժերի ներածի չափ նյութական ողնությանն է դիմում մի այլ յերկրի բանվոր դասակարգ, — արդյոք ամերիկյան բանվոր դասակարգը կկարողանա՞ր այդպիսի ողնությունը մերժել։ Յես կարծում եմ, վոր նա իրեն խայտառակության կմատներ, յեթե տատանվեր ողնություն ցույց տալու։

11-րդ ՀԱՐՑ։ Մենք գիտենք, վոր վորոշ լավ կոմունիստներ այնքան ել համաձայն չեն կոմկուսակցության այն պահանջին, վոր բոլոր նոր անդամներն անաստվածներ լինեն, վորովի հետև ներկայումս հետադեմ հոգիորականությունը ննշված ե։ Կոմկուսակցությունը կարող կլինե՞ր արդյոք ապագայում չեղոք լինել կրոնի նկատմամբ, վորն աջակցելիս լիներ ամբողջությամբ վերց-

րած բովանդակ գիտությանն ու ընդդիմակայելիս չլիներ կոմունիզմին։ Դուք կարող կլինեյի՞ք արդյոք ապագայում քույլատրել կուսակցության անդամներին կրոնական համոզմունքներ դավանել, յեթե այդ համոզմունքները տարընթաց չլինեյին կուսակցական լոյալության հետ։

ՊԱ.ՏԱ.ՍԽԱՆՆ։ Այս հարցում միքանի անձառություն կա։ Նախ, յես չդիտեմ այնպիսի «Լավ կոմունիստներ», վորոնց մասին այստեղ խոսում ե պատվիրակությունը։ Հաղիկ թե առհասարակ այդպիսի կոմունիստներ գոյություն ունենան բնության մեջ։ Յերկրորդ, յես պետք ե հայտարարեմ, վոր Փորձաւ կերպով ասած, մեղամոււմ չկան կուսակցության անդամ ընդունելու այնպիսի պայմաններ, վորոնք կուսակցության անդամության թեկնածուից պարտադիր անաստվածություն պահանջելին։ Կուսակցության մեջ ընդուն-

նելու մեր պայմաններն են՝ ընդունել
կուսակցության ծրագիրն ու կանոնա-
դրությունը, անպայման յենթարկվել
կուսակցության ու նրա սրբանների
վճիռներին, անպայմավճարներ տալ,
մտել կուսակցության կազմակերպու-
թյուններից վորեւ մեկի մեջ։

Պատվիրակներից մեկը: Յես շատ
հաճախ եմ կարգում, վոր կուսակցու-
թյունից վատրում են ասածուն հովա-
տալու համար։

Ստալին: Յես կարող եմ միայն կը կ-
նել կուսակցության մեջ ընդունելու
պայմանների մասին արդեն ասածը։
Ուրիշ պայմաններ մենք չունենք։

Այդ նշանակում ե արդյոք, վոր
կուսակցությունը կրոնի նկատմամբ
չեզոք ե: Վո՞չ, չի նշանակում: Մենք
պրոպագանդա յենք մղում ու պրոպա-
գանդա յենք մղելու կրօնական նախա-
պաշարմունքների դեմ: Յերկրի որենո-
դրությունն այնպէս ե, վոր ամեն մի
քաղաքացի իրավունք ունի դավանելու

ցանկացած կրոնը: Դա յուրաքանչյուրի
խղճի գործն ե: Հենց այս պատճառով
ե, վոր մենք կիրառել ենք յեկեղեցու
բաժանումը պետությունից: Բայց կի-
րառելով յեկեղեցու բաժանումը պե-
տությունից ու դավանանքի աղասու-
թյուն հռչակելով՝ մենք զրա հետ
մեկանդ յուրաքանչյուր քաղաքացու
իրավունք ենք վերապահել համոզելու
միջոցով, պրատաղանդայի ու աղիսա-
ցիսյի միջոցով պայքարելու այս կամ
այն կրօնի դեմ, ամեն մի կրօնի դեմ։
Կուսակցությունը չի կարող չեզոք լի-
նել կրօնի նկատմամբ, և նա հակա-
կրօնական պրոպագանդա յե մղում բո-
լոր ու ամեն տեսակ կրօնական նախա-
պաշարմունքների դեմ, վորովհետեւ
նա զիստությանն ե կողմնակից, իսկ
կրօնական նախապաշարմունքները դի-
տության դեմ են դնում, վորովհետեւ
յուրաքանչյուր կրօն դիտությանը հո-
կաղիր մի լրան ե: Այնպիսի դեմքեր,
ինչպէս Ամերիկայումն ե, վորովհե-

մոտ ժամանակներս դարվինական-ներին դատապարտեցին, մեզանում անհնարին են, վորովհետեւ կուսակցությունը վարում և գիտությունն ամեն կերպ պաշտպանելու քաղաքականություն։ Կուսակցությունը չի կարող չեղոք լինել կրոնական նախապաշար-մունքների նկատմամբ և նա պրո-պագանայի մեջ դեղլու այդ նախապաշար-մունքների դեմ, վորովհետեւ գա շա-հագործող դասակարգերին աջակցող և այդ դասակարգերի նկատմամբ հնա-դանություն քարոզող հետազեմ հո-գեորականության աղջեցությունը խախտելու ճիշտ միջոցներից մեկն է։ Կուսակցությունը չի կարող չեղոք լի-նել կրոնական նախապաշարմունքներ կրողների նկատմամբ, աշխատավոր մասսաների դիմակցությունը թունա-վորող հետազեմ հոգեռօրականության նկատմամբ։ Արդյոք մենք ճնշե՞լ ենք հետազեմ հոգեռօրականությանը։ Այստեղ այն և ճշնչել ենք։ Դժվարախոսությունն այն և

12-րդ ՀԱՐՅ : Դուք կարո՞ղ եք արդյունք համառոտակի տալ մեզ ապագա այն հասարակության բնութագիրը, վոր փորձում ե ստեղծել կոմունիզմը :

նի աշխատություններում։ Յեթէ համառոտակի տանք կոմունիստական հասարակության անստոմիան, ապա դա կլինի այնպիսի հասարակություն, ա) վորտեղ արտազրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականություն չի լինի, այլ կլինի հասարակական, կուեկտիվ սեփականություն. բ) վորտեղ չեն լինի դասակարգեր ու պետական իշխանություն, այլ կլինեն ինդուստրիայի ու դյուզատնտեսության աշխատավորներ, վորոնք տնտեսապես կկառավարվեն վորպես աշխատավորների ազատ ասոցիացիա. գ) վորտեղ պլանով կազմակերպված ժողովրդական տնտեսությունը կխարսխվի բարձրագույն տեխնիկայի վրա՝ ինչպես ինդուստրիայի բնագավառում, այնպես ել դյուզակատնտեսության բնագավառում. դ) վորտեղ քաղաքի ու դյուզի միջև, ինդուստրիայի ու դյուզատնտեսության միջև հակառակություն չի լինի. ե) վորտեղ մթերքները կրաչիվեն

104

Փրանսական Հին կոմունիստների սկզբանքով՝ «յուրաքանչյուրից ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ իր պահանջմունքների».
դ) վորտեղ զիտությունն ու արվեստը լիակատար ծաղկման համելու համար բավականաչափ բարենպատ ուայմաններ կվայելն. է) վորտեղ անհատը ազատ լինելով մի կտոր հացի հոգակարից ու «աշխարհի ուժեկներին» հարմարվելու անհրաժեշտությունից՝ խոկապես ազատ կլինի։ Յեկ այլն և այլն։ Պարզ ե, վոր մենք գեռ հեռու յենք այսպիսի հասարակությունից։
Ինչ վերաբերում ե կոմունիստական հասարակության լիակատար հաղթանակի համար անհրաժեշտ միջազգային պայմաններին, ապա դրանք կդոյանան ու կաձեն՝ կազիտալիստական յերկըսներում հեղափոխական ճկնաժամերի ու բանվոր դասակարգի հեղափոխական պոռթկումների անմանը գուղընթաց։ Զի կարելի բանն այնպես պատկերաց-

105

նել, վոր մի յերկը ի կամ միքանի յեր-
կը ների բանվոր դասակարգը կընթանա
դեպի սոցիալիզմ և մանավանդ դեպի
կոմոնիզմ, իսկ մյուս յերկըների կա-
պիտականերն անտարբեր կնայեն
դրան ու ձեռքները ծալած կնստեն: Ա-
ռավել ևս չի կարելի պատկերացնել,
վոր բանվոր դասակարգը կապիտակա-
տական յերկըներում կհամաձայնի լի-
նել այս կամ այն յերկըներում սոցիալիզ-
մի հաղթական զարգացման սոսկ դի-
տողը: Իրոք կապիտակաները կանեն
իրենցից կախված ամեն բան, վորպես-
զի խեղդեն այդպիսի յերկըներին: Ի-
րոք յուրաքանչյուր լուրջ քայլին դեպի
սոցիալիզմը և մանավանդ դեպի կո-
մոնիզմն այս կամ այն յերկըներում ան-
խուսափելիորեն ուղեկցելու յե կապի-
տակատական յերկըների բանվոր դա-
սակարգի անզուսպ խոյանքը՝ դիկտա-
տուրա ու սոցիալիզմ նվաճելու այդ
յերկըներում: Այսպիսով՝ միջազգային
հեղափոխության հետադա զարգացման

ընթացքում կկազմակերպվի համաշխար-
հային մասշտաբի յերկու կենտրոն.
սոցիալիստական կենտրոն, վորը դեպի
ինքն և ձգում սոցիալիզմին ձգտող
յերկըները, և կապիտականտական
կենտրոն, վորը դեպի ինքն և ձգում
կապիտականիզմին ձգտող յերկըները:
Այդ յերկու կենտրոնի կոփլը համաշ-
խարհային տնտեսությանը տիրանալու
համար՝ վճռելու յե կապիտականիզմի և
կոմոնիզմի բախտն ամբողջ աշխար-
հում: Վորովհետեւ համաշխարհային
կապիտականիզմի վերջնական սկարտությու-
նը սոցիալիզմի հաղթությունն և հա-
մաշխարհային տնտեսության ասպարե-
զում:

II

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ,
ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԵՐԸ

Ստալին։ Յեթե պատվիրակությունը շատ չի հսկնել, ապա յես թույլտվություն կինդրեյի իմ հերթին նրան միքանի հարց առաւ։ (Պատվիրակությունը հայտնում է իր համաձայնությունը)։

1-ին ՀԱՅՑ։ Ինչով է բացատրվում բանվորների արհեստական կազմակերպվածության փոքր տոկոսն Ամերիկայում։ Կարծեմ՝ այսուղ 17 միլիոն ինդուստրիալ բանվոր կա։ (Պատվիրակները տեղեկան են տալիս, վոր 18-ից մինչև 19 միլիոն ինդուստրիալ բանվոր կա)։ Կազմակերպված ե, կարծեմ, մոտ 3 միլիոն։ (Պատվիրակները տեղեկան են տալիս, վոր Աշխատանիք)։

Ամերիկյան ֆեդերացիայում հաշվում ե մոտավորապես 3 միլիոն կազմակերպված բանվոր և, բացի գրանից, այլ միուրյուններում կա կես միլիոն կազմակերպված բանվոր, այդպիսով բնդամենք կա 3½ միլիոն կազմակերպված բանվոր)։ Յետ անձամբ գտնում եմ, վոր սա արհմիություններում կազմակերպված բանվորների շատ փոքր տոկոս է։ Մեզանում իսկ մեջ, արհմիություններում կազմակերպված յերկրի բոլոր պրոլետարների 90 տոկոսը։ Յետ ուզում եյի հարցնել պատվիրակությունից, արդյոք նա դրակա՞ն վաստ և համարում բանվորների այս համեմատարար քիչ կազմակերպված համեմատարար չի է կազմակերպված։ Պատվիրակները արհմիություններում։ Պատվիրակությունը չի կարծում արդյոք, վոր այս փաստը խոսում է ամերիկյան պրոլետարիատի բուլության մասին, կապիտալիստների դեմ տնտեսական բնագավառում պայքարելու նրա գործիքների բուլության մասին։

Բրոֆիկ : Արհեստակցական միությունների փոքրաթիվ լինելը հարկավոր երացարել զո՞չ թէ արհեստակցական կաղմակերպություններում գոյություն ունեցող անհաջող տակտիկայով, այլ յերկրի ընդհանուր տնտեսական սպայմաններով, վորոնք բանվորների ամբողջ մասսային չեն դրդում գեղի կաղմակերպություն և, տնտեսական այդ պայմանների բարենպաստության չնորհիվ, նեղացնում են կապիտալիստների գեմ բանվոր գասակարդի պայքարի անհրաժեշտությունը : Այդ պայմաններն, իհարկե, փոխակելու յեն և այդ պայմանների փոխակելուն զուգահեռ՝ արհմիություններն աճելու յեն, և ամբողջ արհարժումն այլ ուղիով կընթանա :

Դուգլաս : Համաձայն եմ այն բացարությանը, վոր տվեց նախորդ հռետորը : Դրան կավելացնեմ, վոր, նախ, հարկավոր ենկատի ունենալ այն մոմենտը, վոր վերջին ժամանակներս

Միացյալ Նահանջներում իրենք կապիտալիստները խիստ շատ են բարձրացնում աշխատավարձը : Աշխատավարձի բարձրացման այս պրոցեսը նկատվում եր 1917 թվականին, 1919 թվականին և ավելի ուշ : Յեթե համեմատենք ներկայումս գոյություն ունեցող ուեալ աշխատավարձն այն աշխատավարձի հետ, վոր գոյություն ուներ 1911 թվականին, ապա գուրս կդա, վոր այն նշանակալիորեն ավելի բարձր է : Արհշարժումն իր զարգացման պրոցեսում սկզբում կառուցվում եր և այժմ ել կառուցվում ե ըստ ցեխային հատկանիշի, ըստ պրոֆեսիայի հատկանիշի, և արհմիություններն ստեղծվել են առավելաբար վորակյալ բանվորների համար : Այդ միություններին վորում են կանգնել վորով առաջնորդներ, վորոնք փակ կաղմակերպություն են ներկայացրել ու ձգտել են լավ պայմաններ ձեռք բերելու իրենց անդամների համար : Արհեստակցական

միությունների շրջանակներն ընդլայ-
նելու և անորակ բանվորներին արհ-
միություններում կազմակերպելու հա-
մար գրգապատճառներ նրանք չեն ու-
նեցել: Բայց դրանից ամերիկյան արհ-
շարժումն ստիպված է հաջորի սունել
շատ լավ կազմակերպված կազմա-
լիղմբ, վորն իր արամազգրության տակ
ունի բոլոր միջոցները, վորպեսզի
հակազդի արհեստակցական միություն-
ներում բոլոր բանվորների կազմա-
կերպվելուն: Յեթե, ասենք, արեսաց-
ված արտադրությունն իր ձեռնարկու-
թյուններից մեկնումնելում հանդիպում
է արհմիության չափազանց ուժեղ դի-
մադրության, նա դիմում է մինչհ
իսկ այնպիսի միջոցի, ինչպիսին այդ
ձեռնարկությունը վակելը և աշխա-
տանքն իր մի այլ ձեռնարկությունը
փոխադրելն է: Այսպիսով ջախջախ-
վում է արհեստակցական միության
գիմարդությունը: Ամերիկյան կապի-
տալիզմն ինքնուրույնարար բարձրաց-

նում և բանվորների աշխատավարձը,
բայց ընդումին վոչ մի տնտեսական իշ-
խանություն չի տալիս, նրանց կյանքի
տնտեսական բարելավման համար պայ-
քարելու հնարավորություն չի տալիս:
Հետեւալ շատ կարևոր հանդամանքն
Ամերիկայում այն է, վոր կապիտա-
լիստները տարբեր ազգությունների
պատկանող բանվորների միջև գֆոռու-
թյուն են սերմանում: Մեծ մասամբ
անօրակ բանվորներ Յեվրոպայից յե-
կած բանվորներն են կամ, վերջին ժա-
մանակներս, նեզք բանվորները: Կապի-
տալիստներն աշխատում են գֆոռու-
թյուն սերմանել զանազան ազգու-
թյունների պատկանող բանվորների մի-
ջև: Բայց ազգությունների կատարվող
այդ բաժանումը տեղի յե ունենում
նաև վորակյալ ու անորակ աշխատան-
քի հատկանիշով: Կապիտալիստները
սիստեմատիկարար հակամարտություն
են սերմանում տարբեր ազգություննե-
րի պատկանող բանվորների միջև, ան-

կախ նրանց աշխատանքի վորակավութությունից : Վերջին 10 տարում ամերիկյան կապիտալիզմն ավելի լուսավորված քաղաքականություն ե վարում այն տեսակետից, վոր իր արհեստական, այսպես կոչված կոմպանեյական միություններն ե ստեղծում : Նա բանվորներին դրայում ե դեպի իր ձեռնարկության աշխատանքը, բանվորներին շահագրգոռում ե այդ ձեռնարկության շահույթներով և այն : Ամերիկյան կապիտալիզմը հակում ունի հորիզոնական բաժանումը փոխարինելու ուղղաձիությանումով, այսինքն՝ օլառակտելու բանվոր դասակարգը, գրավելով նրան ու շահագրգոռելով հոգուտ կապիտալիզմի :

Կոյլ : Յես հարցին մոտենում եմ վո՛չ թե թերոքայի տեսակետից, այլ պրակտիկայի տեսակետից : Ճիշտ ե, ամենից լավն այն ե, վոր բանվորներին կարմակերպեն լավ ժամանակներում, բայց բանն այն ե, վոր Աշխատանքի Ամե-

րիկյան ֆեդերացիայի անդամների չարժման վիճակագրությունը ցույց ետալիս, վոր Աշխատանքի Ամերիկյան ֆեդերացիան աստիճանաբար կորցնում է անորակ բանվորներին ու իր կազմի մեջ ավելացնում ե վորակյալ բանվորների քանակը : Այսպիսով՝ Աշխատանքի Ամերիկյան ֆեդերացիան ցանկանում է լինել և աստիճանաբար դառնում ե մի կազմակերպություն, վորն իր կազմի մեջ ունի դլմակորապես վորակյալ բանվորներ : Արհեստակցական շարժումն Ամերիկյայում անորակ բանվորներին գրեթե չե ընդգրկում : Արդյունաբերության խոշոր ճյուղերն արհմիությունների կողմից չեն ընդգրկվում : Արդյունաբերության այդ խոշոր ճյուղերից միայն ածխի ու յերկաթուղային արդյունաբերության բանվորներն են վորոշ չափով կազմակերպված, և այն ել ածխարդյունաբերության մեջ աշխատում են 65 տոկ. չկազմակերպված բանվորներ : Արդյունաբերության այն-

սլիսի ճառղերի բանվորները, ինչպիսիք
են առզպատաճութականնը, կառւչուկինը,
ափսամորիլայինը, արհեստակցականու-
թեն գրեթե բոլորովին կազմակերպված
չեն: Կարելի յե սուել, վոր անորակ
բանվորներին արհմիությունները չեն
ընդուրկում: Աշխատանքի Ամերիկյան
ֆեղերացիայից դուրս կանվնած մի
շարք արհեստակցական կազմակերպու-
թյուններ կան, վորոնք աշխատում են
կազմակերպել անորակ ու սակավորակ
բանվորներին: Ինչ վերաբերում է Աշ-
խատանքի Ամերիկյան ֆեղերացիայի
առաջնորդների ուժքին, ապա առաջ-
նորդներից մեկը, որինակ, մետաղա-
դործների արհմիության նախադահը,
միանդամայն բացահայտ կերպով հայ-
տարարել ե, վոր ինքը չի ցանկանում
անորակ բանվորներ գրավել իր միու-
թյան մեջ: Արհմիությունների առաջ-
նորդների նկատմամբ գրությունն այն-
պես ե, վոր ստեղծվել ե առաջնորդնե-
րի մի կաստա, վորը բաղկացած ե մի-

քանի տասնյակ այնպիսի մարդկանցից,
վորոնք ստանում են հակայական
դրույքներ—տարեկան մինչեւ 10 հազար
դոլար և ավելի, ստեղծվել ե մի կաս-
տա, ուր ներս ընկնելը չափազանց
դժվար է:

Դունին: Այս հարցը, վոր գրեց ընկ.
Ստալինը, անարդարացի յե գրված, վո-
րովհետեւ, յեթե նրա յերկրում արհ-
միություններում կազմակերպված ե
բանվորների 90 տակ, ապա այստեղ
իշխանությունը բանվոր դասակարգին
ե պատկանում, մինչդեռ կապիտալիս-
տական յերկրներում բանվորները ճշն-
ված դաստիարակ են, և բուրժուազիան
ձեռք ե առնում բոլոր միջոցները, վոր-
ուեսպի բանվորներին հնարավորություն
չտա արհմիությունների մեջ կազմա-
կերպվելու: Բացի դրանից, այնտեղ գո-
յություն ունեն հետագիմական արհ-
միություններ, վորոնց գլուխ են կանդ-
նած հետագեկ առաջնորդներ: Այս պայ-
մաններում, վոր կան Ամերիկայում,

արհեստակցական միությունների դա-
ղափարն իսկ շատ գժվար և արմատա-
վորել բանվորների գլխում: Սա յև այն
հանգամանքի պատճառը, վոր Ամերի-
կայում այնքան քիչ են տարածված
արհմիությունները:

Ստալին: Վերջին հռետորն արդյոք
համաձա՞յն և նախորդ հռետորների
հետ, վոր Ամերիկայի բանվորական
շարժման լիդերներից վոմանք իրենք
են աշխատում նեղացնել արհեստակցա-
կան շարժումը:

Դումն: Համաձայն եմ:

Ստալին: Յես չեյի ցանկանում
վորեւ մեկին վիրավորել: Յես միայն
ցանկանում եյի պարզել ինձ համար
գործերի դրության տարրերությունն
Ամերիկայում և ԽՍՀՄ մեջ: Յեթէ յես
վորեւ մեկին վիրավորեցի, ներողաւ-
թյուն եմ խնդրում: (Պատվիրակների
ծիծաղ):

Դումն: Յես բնակ նեղացած չեմ:

Ստալին: Կա՞ արդյոք Ամերիկայում

բանվորների պետական ապահովագրու-
թյան սիստեմ:

Պատվիրակներից մեկը: Բանվորների
պետական ապահովագրության սիստեմ
Ամերիկայում չկա:

Կոյլ: Նահանգների մեծամասնության
մեջ գոյություն ունի փոխհատուցում
արտադրության մեջ պատահած դըժ-
բախտ դեսկերի համար, ըստվորում
վարձատրվում և աշխատունակության
կորստյան մաքսիմում 30 տոկոսը: Այդ
բանը գոյություն ունի նահանգների մե-
ծամասնության մեջ: Վարձատրությու-
նը տալիս են մասնավոր ֆիրմաները,
վորոնց ձեռնարկություններում կորսվել
և աշխատունակությունը, բայց որենքն
այդպիսի վարձատրություն պահան-
ջում ե:

Ստալին: Ամերիկայում կա՞ պետա-
կան ապահովագրություն գործազրկու-
թյունից:

Պատվիրակներից մեկը: Վո՞չ: Այն
Փոնդը, վոր ստեղծվում ե գործազր-

կությունից ապահովագրելու համար, կարող ե բավարարել 80-ից մինչև 100 հազար գործազուրկի բոլոր նահանգներում:

Կոյլ: Կա ապահովագրում (վոչ պետական) ինքուստրիալ դժբախտ դեպքերից, այսինքն՝ արտադրության մեջ սպատահած դժբախտ դեպքերից: Բայց հիվանդության հետևանքով կամ ձեռության հետևանքով առաջացած հաշմանդամությունը բնակ չի ապահովագրվում: Ապահովագրական ֆոնդը կազմվում ե բանվորների մուծումներից: Բայց եյության գործը հանդում ե այն բանին, վոր ապահովագրական ֆոնդի այդ ամբողջ գումարն իրենք բանվորներն են վճարում, վորովհետեւ յեթե բանվորներն այդ ֆոնդը չկազմեյին, նրանք բարձրագույն հավելում կատանային, իսկ քանի վոր այդ ֆոնդը համաձայնեցված ե լինում բանվորների ու ձեռնարկատերների միջև, ուստի ե բանվորներն ավելի սպակաս հավելում

Են ստանում: Աս կազմում ե ֆոնդի համարյա թե ամբողջ գումարը: Զեսնարկատերերը փաստորեն մուծում են այդ ֆոնդի չնշին մասը, մոտավորապես 10 տոկոսը:

Ստալին: Յես կարծում եմ, վոր լինեկանի համար հետաքրքրական կլինի, յեթե յես հաղորդեմ, վոր մեղանում՝ ԽՍՀՄ մեջ բանվորներին պետության հաշվին ապահովագրելու վրա տարեկան 800 միլիոն ռուբլուց ավելի յե ծախսվում: Եռոյնպես ավելորդ չեր լինի հաղորդել ձեզ, վոր մեղանում բանվորներն արդյունաբերության բոլոր ճյուղերում, բացի սովորական դրամական աշխատավարձից, լրացուցիչ կերպով ստանում են մոտավորապես աշխատավարձի մեկ յերրորդը ապահովագրության, կենցաղի բարելավման, կուտարական կարիքների համար և այլն:

2-րդ ՀԱՐՑ: Ինչո՞վ բացատրել մասայական բանվորական հատուկ կու-

սակցության բացակայությունը Հյուա-
Ամերիկայի Միացյալ Նահանգներում։
Բուրժուազիան Ամերիկայում ունի ամ-
բողջ յերկու կուսակցություն՝ հանրա-
պետական և դեմոկրատական, ամերի-
կյան բանվորները չունեն իրենց մաս-
սայական կուսակցությունը։ Ընկերնե-
րը չե՞ն դտնում արդյոք, վոր իր մաս-
սայական բանվորական կուսակցության
բացակայությունը, թե կուզ այնպիսի
կուսակցության, ինչպիսին Անդլիայումն
ե (Լեյբուր Պարտի), թուլացնում ե
բանվոր դասակարգի ուժը կապիտա-
լիստների դեմ մզած նրա քաղաքական
պայքարում։ Այնուհետև, ինչո՞ւ բան-
վորական շարժման լիդերներն Ամերի-
կայում, Գրինը և ուրիշները, Ամերի-
կայում բանվորական կուսակցություն
ստեղծելում վճռականապես դեմ են ար-
տահայտվում։

Բրոֆիւ։ Այո՛, յեղեւ և լիդերների
այդպիսի վճիռ, վոր այդպիսի կուսակ-

ցություն ստեղծելու անհրաժեշտու-
թյուն չկա։ Սակայն կա փոքրամասնու-
թյուն, վորը դանում ե, վոր այդպիսի
կուսակցության ստեղծումն անհրաժեշտ
է։ Այժմ Ամերիկայում որյեկտիվ պայ-
մաններն այնպես են, վոր, ինչպես ար-
դեն մատնանշվել ե, արհարժումը Մի-
ացյալ Նահանգներում չառ ե թույլ,
իսկ արհարժման թուլությունն ել, իր
հերթին, բացատրվում ե նրանով, վոր
բանվոր դասակարգն առայժմ կազմա-
կերպվելու և կապիտալիստների դեմ
պայքարելու կարիք չունի այն բանի
չնորհիվ, վոր կապիտալիստներն իրենք
են բարձրացնում բանվորների աշխատա-
վարձը, բավարար նյութական դրու-
թյուն են ապահովում նրանց համար։

Ստալին։ Զե՞ վոր դլավլուապես վո-
րակյալ բանվորներն են ապահովում։
Այսաեղ հակասություն կա։ Մի կող-
մից, դուքս և գալիս, վոր կազմակերպ-
վածության անհրաժեշտություն չկա,
քանի վոր բանվորներն ապահոված են։

մյուս կողմից, ասում են, թե արհմիություններում կազմակերպված են հենց ամենից սլելի ապահովված, այսինքն՝ վորակյալ բանվորները. յերբորդ կողմից, դուրս ե գալիս, վոր արհմիություններում կազմակերպված չեն հենց ամենից քիչ ապահովվածները, այսինքն՝ սակավորակները, վորոնք ամենից ամելի յեն կարիք զգում կաղմակերպվածության: Յես վոչ մի կերպ չեմ կարող հասկանալ այդ:

Բրոֆի: Այո՛, այստեղ հակասություն կա, բայց նույն կերպ հակասական և ամերիկյան իրականությունը քաղաքական ու տնտեսական տեսակետներից:

Բրեթեր: Թեև անորակ բանվորները միություններում կազմակերպված չեն, բայց նրանք ձայնի քաղաքական իրավունք ունեն: Այսողիսով՝ յեթե կան դժոհության մոմենտներ, ապա անորակ բանվորներն այդ մոմենտներն արտահայտում են՝ սպավելով ձայնի իւրենց քաղաքական իրավունքից: Մյուս

կողմից, արհմիություններում դանվադրանվորները, յեթե նրանք առանձնապես ծամանալ են ապրում, ոգտըվում են վո՛չ թե միությունից, այլ ձայնի քաղաքական իրավունքից: Այսպիսով՝ ձայնի քաղաքական իրավունքով վոխհատուցվում ե արհեստակցական կազմակերպվածության բացակայությունը:

Իզրաելս: Հիմնական գժվարություններից մեկն ել ինքը սիստեմն ե, Միացյալ Նահանգների ընտրական սիստեմը: Այստեղ հանրապետության նախագահի ընտրությունների ժամանակակի ալյնմարդը չի ընտրվում, ով ստանում է ամբողջ յերկրի ձայների մեծամասնությունը կամ նույնիսկ վորեե մի զասակարգի ձայների մեծամասնությունը: Այստեղ յուրաքանչյուր նահանգում կան ընտրական կողեզրաներ, յուրաքանչյուր նահանգ ունի վորոշ քանակով ձայներ, վորոնք մասնակցում են նախագահի ընտրությանը: Վորպեսզի նախագահն

ընտրված լինի, անհրաժեշտ է, վոր նա
հավաքի ձայների 51%-ը: Յեթե 3-4
կուսակցություն լինի, այն ժամանակ
իրերի այնպիսի դրություն կուտացվի,
վոր վոչ վոք չի ընտրվի, և ընտրու-
թյունները պետք ե կոնդրես փոխադր-
վեն: Ահա սա յե փաստարկ հանդիսա-
նում յերրորդ կուսակցության ստեղծ-
ման դեմ: Յերրորդ կուսակցություն
ստեղծելու հակառակորդներն այսպես
են փաստաբանում: յերրորդ թեկ-
նածու մի՛ առաջադրեք, վորովհետեւ
այդպիսով դուք կտրոհեք լիբերալ կու-
սակցության ձայների թիվը և լիբերալ
կուսակցության թեկնածուին ընտրելու
հնարավորություն չեք տա:

Ստալին: Մակայն սենատոր Լաֆոլետն
ստեղծել եր իր ժամանակին յերրորդ
տուրքուական կուսակցություն: Բանից
դուրս ե գալիս, վոր յերրորդ կուսակ-
ցությունը չի կարող ձայները տրոհել,
յեթե բուրժուական կուսակցություն ե
նա, բայց կարող ե ձայները տրոհել,

յեթե նա բանվորական կուսակցություն
լինի:

Դեվիս: Յես չեմ գտնում, վոր նա-
խորդ հոետորի մատնանշած փաստը
հիմնական փաստ ե: Բատիս, հիմնական
փաստը հոետելյալն ե: Վորպես որինակ
յես տալիս եմ իմ քաղաքը, վորտեղ
յես ապրում եմ: Ընտրությունների
կամպանիայի ժամանակ դալիս ե այս-
ինչ կուսակցության ներկայացուցիչը և
արհեստակցական կազմակերպության
գլխավորին մի վորևէ պատասխանատու
պաշտոն ե տալիս, արհեստակցական
կազմակերպության գլխավորին, ընտրա-
կան կամպանիայի կապակցությամբ,
վորոչ միջոցներ ե հանձնում, վո-
րոնք նրա ոգտին են գնում, դրանից
հետո նա վորոչ պրեստիժ ե ստանում
այն պաշտոնի կապակցությամբ, վոր
նա ստանում ե: Ստացվում ե իրերի
այնպիսի դրություն, վոր արհմիու-
թենական շարժման լիդերներն իրենք
կամ այս կամ այն բուրժուական կու-

սակլցության կողմնակիցներ են հանդի-
սանում: Ուստի բնական է, վոր յեթք
յերբորդ, բանվորական կուսակցություն
ստեղծելու վերաբերյալ խոսակցու-
թյուններ են ծագում, արհմիութենա-
կան շարժման այս լիդերներն այդպիսի
կուսակցություն ստեղծելու համար
վոչնչի չեն ուղղում ձեռնարկել: Ընդումին
նրանք մատնանշում են այն հանդաման-
քը, վոր յեթք յերբորդ կուսակցու-
թյուն ստեղծվի, ապա արհմիություն-
ներում պառական:

Դուզգլաս: Այն, վոր արհմիություն-
ներում միայն վորակյալ բանվորներն
են կազմակերպված, գլխավորապես
նրանով ե բացատրվում, վոր արհմիու-
թյան մեջ կազմակերպված լինելու հա-
մար պետք ե ունենալ վորոշ ֆոնդ ու
վորոշ ապահովություն, վորովհետեւ
անդամավճարները շատ մեծ են, և ա-
նորակ բանվորները մուտքի բարձր
վճար մուծելու հնարավորություն չու-
նեն: Բացի դրանից, անորակ բանվոր-

ները զանվում են մշտական սպառնա-
լիքի տակ, վոր յեթք իրենք փորձեն
կազմակերպվել, ապա ձեռնարկատեղն
իրենց գուշու կշարտի աշխատանքից:
Անորակ բանվորները կարող են կազ-
մակերպվել վորակյալ բանվորների
գործոն աջակցությամբ միայն: Այսպի-
սի աջակցություն նրանք մեծ մասամբ
չեն ունենում: Ահա այս հանդամանքն ա-
նորակ բանվորների՝ արհմիություննե-
րում կազմակերպվելու հիմնական խո-
չընդուներից մեկն է: Բանվորական
մասսաների կողմից իրենց իրավունք-
ների հիմնական պաշտպանությունն
ընթանում ե այդ իրավունքների քա-
ղաքական պաշտպանության գծով: Յես
հենց սրա վրա յեմ հիմնում անորակ
բանվորների կազմակերպության բացա-
կայության գլխավոր պատճառը: Քա-
ղաքական ու արհմիութենական բնա-
գավառներում անորակ բանվորների
կազմակերպված չինելու հիմնական
մոմենտը յես տնտեսական բազան եմ

Համարում։ Յես սկսաք և մատնանշեմ
ամերիկյան ընտրական սիստեմի մի ա-
ռանձնահատկությունը, ուղղակի ընտ-
րությունները, վորանեղ ամեն մի մարդ
կարող և ընտրական ժողով դալ ու ե-
րեն հայտարարել գեմոկրատ կամ հան-
րապետական ու քիւարկել։ Յես հավա-
տացած եմ, վոր Գոմպերսը չեր կարո-
ղանա բանվորներին սկահել վոչ-քաղա-
քական ծրագրով, յեթե նա չունենար
ուղղակի ձայնավության ոդտին այս
փաստարկը։ Նա միշտ ասում եր բան-
վորներին, վոր յեթե նրանք ցանկա-
նում են քաղաքականապես գործել, ապա
նրանք կարող են մտնել դոյություն
ունեցող յերկու քաղաքական կուսակ-
ցությունների մեջ և այնտեղ զրավել
այս կամ այն սկաշտոնը, այնտեղ իրենց
համար հեղինակություն նվաճել։ Այս
փաստարկի ողնությամբ Գոմպերսին
հաջողվում եր բանվորներին համար-
հել բանվոր դասակարգություն

լու և բանվորական կուսակցություն
ստեղծելու դադարից։

Յ-րդ ՀԱՐՅՑ : Ինչո՞վ բացատրել, վոր
ԽՍՀՄ նանաչման հարցում Աշխա-
տանքի Ամերիկյան Ֆեդերացիայի լի-
դերներն ավելի հետադիմ են, քան
բուրգուաներից շատերը։ Ինչո՞վ պեսք
և բացատրել, վոր այնպիսի բուրգուա-
ներ, ինչպէս են ալ. Բորահը և ու-
րիշները, արտահայտվում են հոգուտ
ԽՍՀՄ ճանաչման, իսկ Ամերիկայի
բանվորական շարժման լիդերները,
Գոմպերսից սկսած մինչև Գրինը, մը-
զում եյին և շարունակում են մղել ա-
մենահետադիմական պրոպագանդան
բանվորական առաջին հանրապետու-
թյան ճանաչման գեմ, ԽՍՀՄ ճա-
նաչման գեմ։ Ինչո՞վ բացատրել, վոր
նույնիսկ մի այնպիսի հետադեմը, ինչ-
պէս ամերիկյան նախկին նախագահ
Վուզբա Վելսոնն եր, հնարավոր եր
գանում «լողջունելու» հորհրդային

Ծուռաստանին, իսկ Գրինն ու Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի այլ լիդերները ցանկանում են ավելի հետապնդման վենել, քան կապիտալիստներն են: Ահա Վուդրո Վիլսոնի «Քողջունի» տեքստը, վոր 1918 թվի մարտին ուղարկվել եր Ծուռաստանի խորհուրդների համագումարի անունով, յերբ գերժանական կայզերի զորքերն արշավում եյին խորհրդային և նինդրադի վրա.

«Ողտվելով խորհուրդների համագումարից՝ յես կուզեյի Միացյալ Նահանգների ժողովուրդների կողմից անկեղծ համակրանք արտահայտել ուսւ ժողովրդին, մասնավանդ այժմ, յերբ Գերմանիան դինված ուժեր և շարժել յերկրի ներսը, վորակեսզի խանգարի աղաստության համար մզվազ կռվին, վոչնչացնի յերկրի բոլոր նվաճումները և իրականացնի գերմանական դիտավորություններն ու ուսւ ժո-

ղովրդի անազատությունը: Թեև Միացյալ Նահանգների կառավարությունը ներկայումս, ցամոք սրտի, ի վիճակի չե ցույց տալու Ծուռաստանին այն անմիջական աջակցությունը, վոր նա ցանկանում ե ցույց տալ, յես կուզեյի ներկա համագումարի միջոցով հավատացնել ուսւ ժողովրդին, վոր Միացյալ Նահանգների կառավարությունը կողտագործի բոլոր հնարավորությունը, վոր ազգի Ծահականից անունությունները, նորից լիակատարինքնիւսանություն (սւերենիտետ) և նրա ներքին գործերում լիակատար անկախություն ու այն մեծ դերի լիակատար վերականգնումն ապահովի, վոր նա ունի Յելլուպայի ու ժամանակակից մարդկության կյանքում: Միացյալ Նահանգների ժողովուրդն ամբողջ սրտով համակրում և ուսւ ժողովրդին՝ ինքնակալությունից ընդ-

միւտ ազատվելու և ինքն իր բախ-
տի տնօրինողը գառնալու նրա
ձգուման մէջ» (տե՛ս « Պրավա » №
50, 1918 թվի մարտի 16):

Կարելի՞ յե արդյոք նորմալ համա-
րել, վոր Աշխատանքի Ամերիկյան Ֆե-
դերացիայի լիդերները ցանկանում են
ավելի հետադեմ լինել, քան հետադեմ
գիլտնը:

Բրաֆի: Յես չեմ կարող պատճառնե-
րը ճշգրիտ կերպով բացատրել, բայց
յես գտնում եմ, վոր հենց այնպես,
ինչպես վոր Աշխատանքի Ամերիկյան
Ֆեդերացիան Ամստերդամի ինտերնա-
ցիոնալի մէջ չի մտնում, նույն այդ
պատճառներով եւ Աշխատանքի Ամերի-
կյան Ֆեդերացիայի լիդերները կանգ-
նած են Խորհրդային Ռուսաստանը
չճանաչելու տեսակետի վրա: Տարբե-
րությունն ամերիկյան բանվորների
հասուլ փիլիսոփայության մէջ
և և ամերիկյան ու յիշրոպական բան-

պորների միջև գոյություն ունեցող
անտեսական տարբերության մէջ:

Ստալին: Բայց Աշխատանքի Ամերի-
կյան Ֆեդերացիայի լիդերները, վոր-
քան ինձ հայտնի յե, չեն առարկում
ինտերակցի կամ Լեհաստանի ճանաչման
գեմ, վորտեղ Փաշիստներն են իշխում:

Բրաֆի: Իրբու որինակ մատնանշելով
Լեհաստանն ու Խոալիան, վորտեղ Փա-
շիստական կատավարություններ կան,
գուշ դրանով եւ բացատրում եք Ամե-
րիկայի կողմից ԽՍՀՄ-ը չճանաչելու
պատճառը: Այդ անբարյացակամ վերա-
բերմունքը գելլի ԽՍՀՄ-ը բացատրվում
է այն անակորժություններով, վոր
ունեն ամերիկյան արհարժման լիդեր-
ներն իրենց սեփական կոմունիստների
հետ:

Դումին: Այն պատճառը, վոր բերեց
նախորդ հռեսորը, —թե նրանք ինչպես
կարող են ճանաչել ԽՍՀՄ-ը, յերբ
նրանք անհամերաշխություն ունեն ի-
շենց սեփական կոմունիստների հետ,—

համողիչ չե, վորովհետեւ ԽՍՀՄ-ը չճանաչելու վերաբերյալ քարողը նրանց մոտ մզկում եր դեռևս մինչեւ ամերիկյան կոմիտասակցության կազմակերպումը։ Հիմնական պատճառն այն ե, վոր Աշխատանքի Ամերիկյան ֆեդերացիայի լիդերները դեմ են ամեն մի բանի, ինչ վոր նման ե սոցիալիզմի։ Յեկայն տեսակետից նրանց լարում են կապիտալիստները, վորոնք ունեն «Աղդամային» քաղաքացիական ասոցիացիա» կոչվող մի կազմակերպություն, վորն աշխատում ե բոլոր միջոցներով ամբողջ ամերիկյան հասարակությունը լարել սոցիալիզմի դեմ՝ ինչ ձեռով ուղում ե այն լինի։ Այդ կազմակերպությունը հանդես յեկայ Այլի Լիի բըռնած դիրքի դեմ, վորը հանդես եր յեկել հանուն Ամերիկայի առևտուրական հարաբերությունների դարդացման ԽՍՀՄ հետ։ Այդ կազմակերպության առաջնորդներն առաջին ելքուն կարող ենք մենք հակել կարդ

ու կանոնին մեր բանվոր գասակարգիք, յերբ լիբերալներն են սկսում այլպիսի խոսակցություններ ունենալ։ «Աղդամային» քաղաքացիական ասոցիացիան» մի խումբ կազմակետների կազմակերպությունն ե, վորոնք խոչոր դումարով փող են ներդրել այդ կազմակերպության մեջ և գեկալարում են նրան։ Զարկալոր ե նշել, վոր Աշխատանքի Ամերիկյան ֆեդերացիայի նախագահի տեղակալ Մատյու Վոլն այս հետադիմական ասոցիացիայի մեջ փոխականաց է։

Բրոֆի։ Արհմիութենական առաջնորդների հետադիմականության վերաբերմամբ բերվող պատճառները հիմնական պատճառներ չեն։ այս հարցի վրա ավելի խորը պետք ե նայել։ Ամերիկյան պատվիրակության ներկայությունը ԽՍՀՄ մեջ գեղվի Խորհրդային Միությունը ամերիկյան բանվորների մի մասի տածած համակրական վերաբերմունքի լավագույն պատճառ-

Ախանն ու ցուցանիշն ե: Յես գտնում
եմ, վոր Աշխատանքի Ամերիկյան Ֆե-
դերացիայի առաջնորդների կարծիքը
ԽՍՀՄ նկատմամբ չի տարրելովում
Ամերիկայի բանվոր դասակարգի մե-
ծամասնության կարծիքից: Բանվոր
դասակարգի մեծամասնության դիրքը
ԽՍՀՄ նկատմամբ բացատրվում ե
ԽՍՀՄ հեռալորությամբ: Ամերիկա-
յի բանվոր դասակարգն ամեն տեսակի
միջազգային գործերով շահագրդոված
չե, իսկ բուրժուազիայի ազդեցությունն
Ամերիկայի բանվոր դասակարգի վրա
ուժեղ կերպով արտահայտվում է ԽՍՀՄ
նկատմամբ նրա ունեցած վերաբեր-
մունքի հարցում:

Խմբագիր Բ. Մարտիրոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբազրիչ Վ. Զիդեղյան
Կոնտրոլ սրբազրիչ Լ. Արուլյան

Գլավլիսի լիազ. № 6589, հրատ. № 552,
Պատվեր № 52, տիրաժ 5000
Հանձնված ե արտ. 28/III 1938թ.
Ստորագրված ե տպագր. 15/IV 1938թ.
Գինը 50 կ., կազմը 1 ո.
Պետհրատ—կուսակցական-քաղաքական
գրականության բաժնի տպարան
Յերևան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0179096

